UC SOUTHERN REGIONAL LIBRARY FACILITY
AX000160595 5

alifornia
gional
ility

Digitized by Google

Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

Generated on 2016-07-15 08:32 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Vartan Derad

Digitized by Google
Original from
UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 08:47 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

~~#69~~
69



Digitized by Google
Original from
UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 08:47 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Generated on 2016-07-15 08:48 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

Թ.- 13.- Հրատարակութիւն Ս. Դ. Հնչ. Կուս. Ամէր. Դրդ. Յանձն.-ի

ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՍԿԻԶԲԸ ԵՒ ՎԱԽՃԱՆԸ

ԳՐԵՑ՝
ՅԱԿՈԲ ԲԱՐԵՋԱՆԵԱՆ

ՏՊԱՐԱՆ
«ԵՐԻՑԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ»-ի
ՓՐԱՎԻՏԷՆՍ
1916

Generated on 2016-07-15 08:48 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

«Ամերիկայի մէջ ոսկիի և արծաթի գիւտը՝ անոր բնիկ ժողովրդին՝ հանքերուն մէջ ստրկացումը և բնաջնջումը, Արևելեան Հընդկաստանի տիրապետութիւնը և կողոպտումը, սեամորթներ բռնելու և ծախելու համար Ափրիկէն որսարան մը դարձնելը սկիզբը կը դնեն քափիտալիստական արտադրութեան թուականին վարդագոյն արշալոյսին։ Այս հովերգական գործողութիւններն են նախնական արտադրութեան կուտակման գլխաւոր կէտերը։ Եւրոպական աղգերու վաճառականական պատերազմը ասոնց հետքերուն վրայ կը քալէ աշխարհը իրեն թատրոն դարձնելով»։

ՔԱՐԼ ՄԱՐՔՍ

«Պատերազմը շահերու բաղխումն է»։

ԺԷՆԷՐԱԼ ՎՕՆ ՏԷՐ ԿՕԼՑ

Generated on 2016-07-15 08:50 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

ԵՐԿՈՒ ՏՈՂ

Պատերազմի մասին Մարքսիստական տեսութեամբ հետևեալ պզտիկ փորձը հրատարակուած է Պոլիս, «Կոհակի» մէջ մօտաւորապէս ներկայ պատերազմէն գրեթէ տարի մը առաջ։

Հաւատալով թէ այս արեան և բոցի օրերուն մէջ անոր այժմէութիւնը և թարմութիւնը վիճաբանութեան տակ չեն իյնար, պրոշիւրի ձևով հրատարակութեան կուտանք առանց փոփոխութեան, միայն տեղ տեղ ծանօթագրելով պարզելու թէ այսօրուայ պատերազմի դէպքերը և իրողութիւնները ինչպէս կը ներդաշնակին դրուած մըտքերուն, թէ ինչպէս այս աշխարհաւեր պատերազմի ներկայ իրականութեամբ Մարքսի ընկերական գիտութիւնը կը դառնայ պատերազմի, ինչպէս նաև ընկերական բոլոր հարցերու վերլուծման միակ բանալին։

ՅԱԿՈԲ ԲԱՐԵՋԱՆԵԱՆ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 08:50 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Generated on 2016-07-15 08:51 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Digitized by Google

Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՍԿԻԶԲԸ ԵՒ ՎԱԽՃԱՆԸ

ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԾԱԳՈՒՄԸ

Ասիկա այնպիսի հարց մըն է, որ դարերէ ի վեր մարդկութիւնը զբաղեցուցած է, փիլիսոփաներ, ընկերաբաններ և մարդասէրներ, իրենց ժամանակի գոյութիւն ունեցած պայմաններէն բացատրելով, աւելի կամ նուազ հարցին մօտենալ փորձած են, և սակայն անկարող եղած են զայն լուծել, դրական կամ բացասական պատասխան մը տալ, փափուկ և զգայուն սրտով մը դիմած են մարդոց զգացումներուն, անոնց սրտին և մարդասիրութեան, անոնց մէջ արծարծելով պատերազմի և արիւնհեղութեան դէմ ատելութիւն, հակակրութիւն և սարսափ. և սակայն տիրող դրութեանց և պայմաններու դիմադրելի հոսանքին առաջ, պարտուած և ինկած են, առ առաւելն կոչած են զայն ՉԱՐԻՔ ՄԸ, անխուսափելի չարիք մը, որ մար-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 08:51 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

գուն հետ ծնած, մեծցած ու զարգացած է, և ա-
նոր հետ ալ պիտի քալէ յաւիտեան։

Պատերազմը պիտի ապրի՞ թէ մեռնի օր մը
մարդկութեան մէջ. դրակոն կամ ժխտական պա-
տասխան մը ստանալու համար, անհրաժեշտ է գիտ-
նալ թէ՝ ի՞նչ է պատերազմը, ուսկի՞ց է իր ծա-
գումը, ի՞նչ են անոր գոյութեան հիմերը և որո՞նք
են զարգացման աստիճանները։ Առանց ասոնք գիտ-
նալու կարելի չէ անոր կենդանութեան կամ մահ-
ուան վճիռ մը տալ։ Դարերու միջոցին քաղաքա-
կրթութեան փիլիսոփաներու բոլոր խարխափումն-
երէ յետոյ, այս հարցին վերջին և վճռական պա-
տասխանը, ինչպէս նաև ընկերական շատ մը հարց-
երու, ընկերվարական փիլիսոփայութեան կը պատ-
կանի։

Թէ պատերազմը մարդկային էակը ծնած է, ի-
րեն յատուկ պայմաններով զարգացուցած է, մէկ
խօսքով մարդկային հաստատութիւն մըն է, ան-
տարակուսելի է։

Շատ անգամ, մարդիկ՝ մարդկային բոլոր այս
խժդժութիւնները և անարդարութիւնները, պա-
տերազմները և արիւնհեղութիւնները, մարդուն
կենդանական կեանքին մնացորդ և ժառանգութիւն
կը սեպեն, և կ'ըսեն, որ մարդկութիւնը որչափ
քաղաքակրթի, այնչափ պիտի ազնուանայ, որչափ
կրթի ու զարգանայ, այնչափ պիտի հեռանայ կեն-
դանական, բարբարոսական արարքներէ։ Ասիկա
մարդոց կողմէ նեռուած ձրի և անիրաւ զրպարտու-
թիւն մը և նախատինք մըն է կենդանական թա-
գաւորութեան դէմ, որովհետև, բուն իսկ մարդոց
ձեռքով գրուած պատմութեանց մէջ իսկ կարե-
լի եղած չէ գտնել, ոչ մէկ արիւնահեղ դէպք, որ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 08:51 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

հաւասարած է մարդկային պատերազմներուն։ Բացարձակ սխալ մրն է այդ կարծիքը և ինքնարդարացումը, որովհետև եթէ մարդկային քաղաքակրթութիւնը, մարդկային այդ վայրենի և գազանական բնազդը ազնուացուցած ըլլար, ներկայ մարդկութեան պատերազմները և անարդարութիւնները անհունօրէն նուազ և փոքրացած պէտք է ըլլային և մարդիկ հրեշտակներու մօտեցած, ինչ որ իրաղդատութիւնը՝ աղաղակող հակասութիւնը և ծանրութիւնը ներկայ է՛ն քաղաքակիրթ մարդկութեան ուսերուն վրայ կը դնէ։

Կենդանիներուն մէջ, բացի մի քանի բացառիկ անագորոյն գազաններէն և ո՛չ մէկը մեթոտիկ և սիստէմաթիկ կերպով մարդկային պատերազմներու արեան և նախճիրի բնազդը ունուցած է, մանաւանդ եթէ մի քիչ բարձրագոյն կենդանիներու մէջ մտնենք։ Կենդանիները վայրագ և անգութ են, երբ անօթի են, նոյն իսկ է՛ն անագորոյն կենդանին, երբ կուշտ ստամոքս ունենայ հազուադէպ աւարագաներու տակ արիւն և դիակ կը սփռէ։ Բայց մարդիկ եղած են աւելի անգութ այն ատեն, երբ կուռ կուշտ առատութեան շտեմարաններու վրայ պառկած են։ Կապիկներու մէջ ամենէն վայրագը կը պատմեն Կորիլան, որ իր նմանին դէմ կը կռուի և կ՛ոպաննէ շատ անգամ, ասիկա դարձեալ ո՛չ թէ ուտելիքի համար եղած է, այլ սեռային վէճի, էգի համար։

Պատերազմը, ճիշտ է թէ, ուտելիքի աղբիւրներու անատուգութենէ և անբաւականութենէ առաջ եկած է, որը կերկարի մարդկային կեանքի մանկութեան մէջ, սակայն այսօր, իր գոյութեան նախկին հողը կորուսած է և դարձած է աւելորդ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 08:51 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

չարիք մը և պատուհաս մարդկութեան։ Ճիշտ է թէ, մարդկային կեանքի գոյութեան իրաւունքը կռիւ է և պայքար, յաւիտենական պայքար, որ չի պիտի կանգ առնէ, բայց այդ պայքարը ո՛չ թէ մարդուն, իր ընկեր արարածի դէմ է, այլ բնութեան, որն է մեր միակ և անհաշտ թշնամին, որուն հետ պիտի գօտեմարտինք, և քակենք անոր բռնութիւնները և տիրապետենք անոր։ Մարդը բնութեան գրկին մէջ անապահով, անպատսպար ծնած է, անոր լուծին տակ, անոր քմահաճոյքին խաղալիկ։ Սխալ է նաև այն կարծիքը թէ մարդը բնութենէն ազատ և անկախ ծնած է, մարդիկ են որ ստրուկի անուրը դրած են անոր ձեռքին։ Եթէ մարդիկ որոշ պայմաններու տակ մարդոց մէկ մասը չղթայի տակ պահած են, և սակայն մարդիկ են եղած, որ համակամոյժով և հաւաքական պայքարով բնութեան տաժանակիր չղթաները քակած են։ «Մարդը ազատ է, մինչև իսկ, եթէ չղթաներու ներքև ծնէր»։ Շիլլէրի այս խօսքը կ՚ըսէ ժոզէֆ Տիցցէն «սրբազրութեան պէտք ունի, մարդը չղթաներու մէջ ծնած է և պէտք է պայքարի ազատութեան համար, է՛ն ծանր չղթաները, է՛ն զօրաւոր կապանքները... անոր վրայ դրուեցան բրնութեան կողմէն։» Է՛ն թշուառ և ողբալի էակը առաջին մարդը եղած է որ ո՛չ թէ միայն ազատ ծնած չէ, այլ ամենամեծ ստրուկը, որ բնութեան դէմ միս մինակ զարհուրելի անհրաժեշտութեան մտրակին տակ, դէպի ազատութիւն իր պայքարի հիմը դրած է և ամեն մէկ քայլի բնութեան չղթաներէն օղակ մը փրցուցած իր վրայէն բնութեան վզին դրած է։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 08:51 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳՈՐԾԻՔ ԵՒ ԶԷՆՔ

Բայց մարդը բնութեան շղթաներէն, ապրուստի չգոյութենէն ազատելու համար միջոցներու պէտք ունէր, բնութիւնը հայթայթած չէր բնական զէնքեր իր ֆիզիքական կարիքը գոհացնելու համար, զէնքի և գործիքի պէտք ունէր, Ֆրանքլին ըսած է «Մարդը գործիքաւոր կենդանի է». բայց այդ գործիքը բնութիւնը իր ձեռքին մէջ չի դրաւ, այդ գործիքը նոյն ինքն մարդն էր որ երևան բերաւ։

Քաուցկի կ'ընդունի և կը հաստատէ, որ մարդիկ կենդանիներէն միայն զանազանող յատկանիշը գործիք հնարելն է։ Գործիք գտնել և գործածելու մէջն իսկ կենդանիներ մարդէն ետ մնացած չեն, փայտեր և քարեր միջոց ըրած են իրենց ուտեստը հանելու համար. բայց մարդը գործիք հնարած և ստեղծած է և երևան բերած է այն, ինչ որ բնութեան մէջ եղած չէ։ «Արտադրութեան միջոցներու արտադրութեամբը» կ'ըսէ Քաուցկի, «կենդանի մարդը կ'ակսի մարդկային էակ դառնալ, որով կը բաժնուի կենդանական աշխարհէն, բուն իսկ իր կայսրութիւնը հիմնելու համար, կայսրութիւն մը իր առանձնայատուկ զարգացումով, բոլորովին անծանօթ է բնութեան միւս մասերուն մէջ ոևէ նմանութիւն մը չունի մէկին հետ»։

Ուրեմն, չատ ճիշտ պիտի ըլլար եթէ Ֆրանքլինի խօսքը ըսէր «Մարդը գործիք հնարող կենդանի մ'է»։

Անշէն, անպատսպար մարդը բնութեան երկաթէ ժանիքներուն տակ բռնուած իր գոյութիւնը պահելու, իր ֆիզիքական կարիքները հոգալու

Generated on 2016-07-15 08:52 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

համար բռնադատուած էր միջոցներ գտնելու։ Բնութիւնը որչափ որ խիստ և դաժան և սակայն իր բռնադատումներով թելադրանքը տուաւ մարդուն իր դէմ պայքարելու միջոցները յղանալու և մարդը երևան բերաւ իր պայքարի առաջին գործիքը և այդ գործիքը ո՛չ այլ ինչ էր եթէ ոչ զէնք մը, տեղին և պայմանների համեմատ զէնք մը, յարձակողական կամ պահպանողական։ Նետը և աղեղը չինեց կենդանիներէ պաշտպանելու և կենդանիներ որսալու համար, ուռկանը չինեց ձուկերու դէմ իբրև յարձակման զէնք, տուն չինեց՝ օդի և կլիմայի դէմ պաշտպանութիւն մը, զգեստը, զբրահ մը օդի խստութեան դէմ, բահ և բրիչը յօրինեց, բնութեան կուրծքը պատռելու և անկէ քաղելու ապրուստի աղբիւրները։

ԳՈՐԾԻՔ ԵՒ ԶԷՆՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Առաջին անգամ որ նախնական մարդը, իր գործիք—զէնքը երևան դրաւ, որչափ ալ կոպիտ և անոպայ, փայտէ թէ քարէ, մարդկային քաղաքակրթութեան առաջին հիմնաքարը դրաւ, այդ թըւականն է մարդկային յառաջդիմութեան սկիզբը։ Մարդուն «արտադրութեան միջոցներու արտադրութեամբ» փոխուեցան նաև մարդոց մտածելակերպը և խորհուրդը, հետզհետէ այդ միջոցներու զարգացմամբ նորանոր ըմբռնումներ և գաղափարներ յառաջացան։ Պատմաբաններ, ազգագիրներ երբ մարդկային քաղաքակրթութեան հանգրուանները կը չափեն գործիքներու տեսակով և ատիճանական զարգացմամբ, պատմական ամենամեծ ճշմարտութիւն մ'է որ կը հաստատեն և իրաւունք կուտան

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 08:52 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ընկերվարական պատմական մատերիալիստական փիլիսոփայութեան։ Երբ քարէ, պղնձէ, երկաթէ դարեր անունով կորոշին այդ քաղաքակրթական աստիճանները կապացուցանեն թէ քարէ դարու մը մէջ մարդկային մտքին զարգացումը, քարէ գործիքներէն յառաջացան և չէին կրնար երևան գալ և զարգանալ ու սահեցել մարդկային նոր ընկերական փոխ յարաբերութիւնները։

Ամերիկացի գիտնական Լուիզ Մորկըն, մարդկային քաղաքակրթութեան աստիճանները որոշող ամենէն գիտական և ճշգրիտ բաժանումները կը դնէ, որոնք արտադրութեան գործիքներու և անոնց արտադրութենէն ու յարաբերութենէն ծագում առած են, և իրենց կարգին կրօնական, քաղաքական և փիլիսոփայական մտածումները ծնած են։

Պայծառ գաղափար մը կազմելու համար այդ մասին համառօտ և խտացած ձևով հոս կը դնենք Մորկընի գծած բաժանումները։ Մորկըն մարդկային քաղաքակրթութիւնը երեք մասի կը բաժնէ. վայրենիութեան, բարբարոսութեան և քաղաքակրթութեան, որոնց առաջին երկուքը երեքական շրջաններու։

Ա. Վայրենիութեան առաջին շրջանը կսկսի մարդկութեան մանկութենէն մինչև կրակին գտնելը և ձուկին իբրև կերակուր գործածութիւնը, միջին շրջանը կրակի գիւտէն մինչև աղեղին և նետին հնարումը, վերջին շրջանը՝ նետի հնարումէն մինչև խեցեղէններու գործածութիւնը, բրտագործութիւնը։

Բ. Բարբարոսութեան դրութեան առաջին շրջանը կսկսի կաւագործութենէն մինչև վայրենի կենդանիներու ընտելացումը և արմատներու մը-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 12:24 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

չակումը, միջին շրջանը՝ արմատիքներու մշակումէն մինչև երկաթը հալեցնելու գործողութեան հնարքը, իսկ վերջին շրջանը՝ երկաթի ձուլումէն մինչև ձայնական այբուբէնի հնարումը, գրի և գրականութեան շրջանը։

Այբուբէնի գիւտէն ասդին եղած բոլոր գիւտերը և գործիքները քաղաքակրթութեան սեփականութիւնը կը սեպին։

Որով բացայայտ ճշմարտութիւն է որ քաղաքակրթութեան բոլոր աստիճանները բացառապէս հիմնուած են. արտադրութեան գործիքներու և տնտեսական զարգացման վրայ։ Նոյն իսկ հիմա ալ, քափիտալիստական այս շրջանին, քաղաքակրթութեան սանդուղները, մտքի և գաղափարի փոփոխումներով ու շարժումներով չի զանազանիր, այս կամ այն կրոնի, այս կամ այն փիլիսոփայութեան կամ քաղաքական դրութիւններու անունով, այլ տնտեսական զարգացման և արտադրութեան, ճարտարարուեստի գործիքներովը, կը կոչին երկաթէ գործիքի — մեքենաներու, շոգի և ելեքտրականութեան դարեր անունով։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԳՈՅՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Մենք ըսինք, որ պատերազմներու ծագումը տնտեսական պայմաններու անբաւականութենէն երևան եկած է, կեղանի մարդը իր գոյութիւնը պահելու համար պիտի պայքարէր ո՛չ թէ բնութեան դէմ, կենդանեաց դէմ, այլ նաև իր ընկեր մարդուն դէմ, քաղցէն չի մեռնելու համար, ամբողջ մարդկային ցեղը չի կորսուելու համար մէկ մասը միւսին կեր պիտի ըլլար անխուսափելիօրէն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 08:52 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

«յարմարագոյններու մակապրում»ի վարդապետութեամբ։ Այսպէս նախնական ցեղեր պատերազմներ մղած են իրենց դրացի ցեղերու դէմ, զանոնք գերի բռնած և զանոնք ուտելով իրենց կեանքը յաւերժացուցած են։

Ասիկա իր ատենին և պայմանին տակ, բնական էր, հետևաբար ոչ անիրաւ կամ անարդար։ Յետոյ երբ արտադրութեան գործիքներուն զարգացմամբ կարելի եղաւ բնութենէն քաղել մշակութեամբ ամեն ինչ, այն ատեն բռնուած գերիները փոխանակ մորթել ուտելու, աշխատցնելը աւելի յարմար և օգտակար նկատուեցաւ, և մարդակերութիւնը նկատուեցաւ անարդար և բարբարոսական, իսկ ստրկական աշխատանքը և շահագործումը բնական և ժամանակակից։ Ֆ. Էնկէլս կըսէ որ մարդակերութիւնը մարդկային բոլոր ցեղերու անխուսափելի շրջան մը եղած չէ, այլ այն տեղը, դաշտային այն երկիրները, ուր տեղ ոչ ծովի կենդանիներէն, ոչ ալ լեռներու և անտառներու պտուղներէն և կենդանիներէն կրնային օգտուիլ և իրենց քաղցը յագեցնել բնութեան ժլատ կուրծքին վրայ, իրենց քաղցին ոչ մի միջոց կարենալ գտնելուն համար ստիպուած են իրար յօշոտել և ապրիլ։

ՍՏՐԿՈՒԹԻՒՆԸ

Ուրեմն կարելի է ընդունիլ որ պատերազմները մարդկային ընկերութեան մէջ ծագում առած են ստրկութենէն շատ առաջ։ Նախ պատերազմներ մղած են ու գերի բռնած են, յետոյ զանոնք ստրկացուցած և անոնց աշխատանքով ապրած են։ Ստրկութիւնը որ մարդկութեան նախկին շրջաններու մէջ գոյութիւն ստացած է և երկար դարեր շարունակուած և հասած է մինչև մեր օրերը, ու մինչ կը նկատենք

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 08:53 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

զայն անարդար և ոճիր մարդուն ազատ իրաւունքին դէմ, ունեցած է ինքն ալ իր գոյութեան իրաւացի պայմանները, դարձեալ տնտեսական զարգացման անբաւականութենէն և ուտեստի աղբիւրներու չգոյութենէն։ Եթէ նախկին քաղաքակրթութիւնները ստրկական աշխատանքին վրայ չի հիմնէին իրենց գոյութիւնը, մենք այսօր անցեալ քաղաքակրթութեանց փառաւոր շրջաններու,— Ցունական, Եգիպտական, Ասորական և Հռովմէական, արդիւնքը չպիտի կրնայինք ստանալ։ Աթէնական հոյակապ քաղաքակրթութիւնը ստրկական աշխատանքի ուսերուն վրայ չինուած է, ստրուկներու բազուկներն են որ չինած են Եգիպտոսի բուրգերը և Հռովմի յաղթական կամարները։ Արտադրութեան միջոցները այնչափ անմշակ էին և արդիւնքը այնչափ անբաւական որ եթէ ստրուկը ֆիզիքապէս չաշխատէր և իր աշխատանքէն բաժին չի հանէր ստրկատիրոջ, անիկա ալ պիտի թաղուէր ֆիզիքական աշքատանքով և գոյութիւն չպիտի ունենար ընտրեալ դասակարգ մը որ մտքի և հոգիի մշակումներու հետևէր։ Մտաւոր զարգացման, հետախուզութեան համար քաղաքակրթական անխուսափելի պահանջ դարձած էր ստրկական աշխատանքի հիմնարկութիւնը և չահագործումը։ Հետեւաբար, ստրկութիւնը իր նախնական, մանկական շրջանին մէջ ոչ թէ միայն անհրաժեշտ չարիք մը եղած է, այլ նաև անհրաժեշտ օրհնութիւն մը մարդկային աստիճանական յառաջդիմութեանց համար։

ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Մենք տեսանք որ պատերազմներու ծագման պատճառը նախնական մարդկային ապրուստի ան-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 08:53 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բաւականութիւնն էր, բայց երբ արտադրութեան միջոցները զարգացան և մարդիկ կարող եղան բընութեան ծանր չղթաները թուլցնել և մեղմել անոր տաժանքը, պատերազմները հետզհետէ կորսնցուցին իրենց գոյութեան հողը, պատերազմի նախկին էութիւնը կորսուեցաւ, բայց ձևը նոյնը մնաց, պատերազմները հաստատուեցան նոր հիմքերու վրայ։ Այլևս անհրաժեշտ կարիքը չէր որ մարդիկը պատերազմի կը մղէր, այլ հարստութեան տեսակ մը աւազակութեան միջոց։ Քաւուցկի կընդունի որ այդ ատենի պատերազմներն ալ իրենց գոյութեան իրաւացի պատճառներն ունէին։ Համայնքին պահանջ դարձած էր, ընկերական ազդակ մը, մզում մը, համայնքը ամուր և կուռ չղթայով մը կապելու համար։ Պատերազմները ո՛չ թէ միայն տնտեսական և ընկերական զարգացման խթաններ եղած են, այլ համայնքի անդամներուն մէջ քաջութեան զոհողութեան և համայնքի շահին նուիրման ազդակ մը։

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ

Համայնական կեանքի քայքայումէն յետոյ է, որ պատերազմները դարձած են դասակարգային։ Երբ արտադրութեան միջոցները սեփականութիւն դարձան մէկ մասին, և միւս մասը սոսկ շահագործուողի վիճակին ենթարկուեցաւ, պատերազմները դարձեալ փոխեցին իրենց գոյութեան նախկին պայմանները և աւելորդ հանգիսացան համայնքի զարգացման տեսակէտով։ Սակայն պատերազմները չի վերջացան, պահեցին դարձեալ իրենց արտաքին ձևերը և էութիւնին ստացան նոր կաղապար։ Երբ ազգ մը պատերազմ կը մղէր ուրիշ ազգի դէմ, այլևս համայնքին շահը սոսկ երևութական դարձած էր,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 08:53 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

իրականութեան մէջ տիրող դասակարգի շահերը և տիրապետութիւնը միակ գրգիռն էին պատերազմական արկածախնդրութեան՝ ժողովուրդները սուրի և մտրակի տակ արեան դաշտերը կը մղէին։

Սակայն տիրող դասակարգերը իրենց դասակարգային շահերը ծածկելով չեն դադրած զայն ամբողջ համայնքին շահը ներկայացնել, համայն ժողովրդին և հանուր հայրենիքին պատերազմներ մղել։ Այդ թւականէն բանակը կստանայ վարձկանութեան դրոշմը. կռուողները որչափ որ ճակատամարտ կը վազէին՝ անոնք յանուն իրաւունքի և արդարութեան չէին պատերազմեր, այլ այդ յանուն տիրող դասակարգի շահերուն, տգիտաբար և անգիտակցաբար։ Այսու հանդերձ, ստրկութեան շրջաններու մէջ պատերազմողները դարձեալ հասարակութեան մէջ առանձին դասակարգ մը կը կազմէին և յարգանքի արժանի։ Աւատական շրջանին իսկ ազնուականներ անմասն չէին մնար պատերազմէ. պատերազմիկը ասպետական ոգին և յարգանքի ծիրանին ունէր իր հետը։ Քափիտալիստ դասակարգն էր որ եկաւ զինուորականութիւնը վարձկանութեան էն ստորին աստիճանին հասցուց իր դասակարգային աւելի խոր և բնորոշիչ յատկութեամբ։ Քափիդալիստ դրութիւնը ինչպէս որ ընկերական բոլոր հաստատութիւնները իրենց զարգացման բարձր աստիճանին հասցուց, այսպէս նաև, պատերազմները այնչափ զարգացուց, այնչափ դասակարգային ըրաւ որ, այլ ևս բանակը սոսկ մարդասպան մեքենայի վերածեց իր ձեռքին մէջ։

Քափիդալիստ դասակարգը ինքզինք բոլորովին բաժնեց և հեռացաւ զինուորականութենէն և անոր ղեկավարելու և ուղղելու պաշտօնը և պատասխա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:32 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նատութիւնը յանձնեց իր կատարելագործած քաղաքական մեքենային՝ կառավարութեան, իրեն պահելով անոնց տիրելու և հրամայելու վերին հրամանը։ Իր շահերը և տիրապետութիւնը ծածկելու համար քաղաքական կեղծիքի ամենէն թանձր դիմակը հագաւ, կրօնական, կրթական և գիտական ամենէն ճարտար ծպտումներու մտաւ։

Պատերազմները իրենց զարգացման աստիճանին մէջ որչափ որ հետզհետէ համայնական ըլլալէ դադրեցան և դասակարգային շահի գործիք դարձան, անոնք դարձեալ, իրենց ստացած նոր էութեամբ և ձևերովը, բացարձակապէս մարդկային յառաջդիմութեան տեսակէտով անարդարանալի չէին. անկարելի է ժխտել անոնց տուած օգուտները նոյնիսկ դասակարգայի ձևին տակ։ Ներկայ քափիտալիստ դրութիւնը կանգնած է տիրող դասակարգին՝ քափիտալիստին շահի և տիրապետութեան վրայ և այն բոլոր մրցակցութիւնները, գաղթային քաղաքականութիւնները և պատերազմները, բացառապէս քաբիթալիստ դասակարգի տիրապետութեան փիլիսոփայութենէն կը բղխին և սակայն այս բոլորը իրենց նախնական վիճակին մէջ քաղաքակրթութեան և յառաջդիմութեան խոշոր ազդակներ եղած են և ներկայ դարերու բոլոր օգուտները և բարիքները քաբիտալիզմի տնտեսական զարգացման արդիւնք են։ Քաբիտալիզմը դատապարտութեան սիւնին գամող ամենամեծ դատաւորը, ընկերվարութիւնը, այդ իրաւունքը կուտայ անոր և անոր՝ մարդկութեան բերած բարիքներուն առաջ իր գլխարկը կը հանէ։ Ինչպէս որ մարդակերութիւնը, ստրկութիւնը և նախնական պատերազմները իրենց գոյութեան իրաւունքը կորսուսած են, հետզհետէ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:33 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

տնտեսական զարգացման միջոցին, այսօր քաբիդալիզմը և իր մասնայատուկ եղող պատերազմական բոլոր գործողութիւնները կորսնցուցած են իրենց ապրելու հողը և դատապարտուած են պատմութեան ժառանգութիւն ըլլալու։ Քաբիդալիզմը իր սարօք, իր յառաջացուցած բոլոր չարիքներու յամառումը, դեգերումը և խարխափումներն են որ դարձած են այժմ մարդկութեան ամենամեծ պատուհասները, որոնց մէջ պատերազմները առաջին աստիճանին վրայ կը կանգնին։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՋԱՏԱԳՈՎՆԵՐԸ

Միամիտ ըլլալու չափ դիւրահաւան չենք, որ հաւատանք թէ այն բոլոր կրօնական առաքելութիւնները, ուսումնական խուզարկութիւնները և աշխարհագրական հետազօտութիւնները, անծանօթ երկիրներ և աշխարհներ գտնելու մարմաջը և հետամտութիւնը, որ քաբիդալիզմի ուղղակի միջոցներով և օժանդակութիւններով ճամբայ կիյնան, ծագում կառնեն սոսկ մարդասիրական, կրօնասիրական և քաղաքակրթական զգացումներէ։ Իրենց հաւատքին վրայ տարակուսող միսիոնարներ քաբիդալիզմի յառաջապահ գունդերն են, որոնց մին, խաչին տակ թնդանօթը կը կրէ, միւսը մարդասիրութեան դիմակին տակ, շահագործական ձեռնարկներու դաշինքը կը կոչէ, մին յանուն տառապող ժողովրդի կոյս և անբիծ հողեր կը փնտռէ, ուրիշ մը կայտառ և ուժեղ բազուկներ շահագործելու շուկաներ կը պատրաստէ։ Այդ բոլորին զսպանակը քաբիդալիզմի շահն է։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:33 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Եւրոպական պատերազմի ծագման առաջին օրին իսկ պարզուեցաւ և ամեն մարդ ականատես եղաւ թէ ինչպէս զանազան երկիրներու մէջ միսիոնարներ, որոնք յանուն քրիստոնէութեան և քաղաքակրթութեան ծածկուած էին, յանկարծ մէկ կողմ նետեցին սքեմը և երևան եկան պատերազմի դաշտին վրայ որպէս զօրական, զիրենք ճամբող երկիրներու քաղաքական և տնտեսական շահերը պաշտպանելու համար։ Թէ ինչպէս Գերման միսիոնարներ, որոնք կրթութեան և մարդասիրութեան դիմակով Թիւրքիոյ բոլոր խաւերուն մէջ ցանցի պէս տարածուած էին, պատերազմի առաջին չափորին սուրը մէջքերնին կապեցին և նախապէս ծրագրուած և կերտուած որբանոցներն և այլ հաստատութիւնները ամրոցներու վերածելով Գերման քաբիդալիզմի արիւնոտ քաղաքականութեան գործաւորները հանդիսացան։ Հիմա պարզ կը հասկցուի թէ հռչակաւոր Հայր Լիւփսիւս մը թրքական կարմիր եղերերգութեանց համար կոկորդիլոսի արցունքին տակ Գերման յառաջխաղացութեան փողարը կը լլայ ի գին հայ ժողովրդի բնաջնջման։ Հայր Ֆըրէտէրիք Նաուման մը Ֆայզեր հռչակաւոր ուխտագնացութեան ուղեկիցը կըսէ թէ իրենց «ազգային քաղաքականութիւնն է որ քաղաքականապէս անտարբեր կը մնան (չեն ըսեր իրենք կը թելադրեն) Թիւրքիոյ կայսրութեան մէջ քրիստոնեաներու տառապանքին որչափ որ անիկա ցաւագին ըլլայ իրենց զգացումներուն»։

Անոնք բոլորն ալ կեղծիքի տակ, խաղաղ ճանապարհով կը ղրկեն իրենց գործակալները, որոնք անոնց տիրապետութիւնը հաստատելու համար գիտակցաբար թէ անգիտակցաբար կը հետևին։ Բայց

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:33 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

քաքիտալիզմը իր անժամանակ և աւելորդ գոյութիւնը պահելու և չարիքները յաւէրժացնելու համար չի դադրիր իր պաշտպաններու և ջատագովներու բերնով. ինչպէս ներկայ բոլոր չարիքներուն, նոյնպէս պատերազմի փառաբանութիւնը երգելու։ Ցանուն ազգի, յանուն կրօնի, յանուն հայրենիքի և նոյնիսկ յանուն մարդկային յառաջդիմութեան ներբողելով, ժողովրդները յաւիտենական տգիտութեան և քնոյ մէջ կը պահեն, որպէսզի կարելի ըլլայ իրենց տիրապետութիւնը մշտնջենաւորել։ Այստեղ կը բերենք քաքիդալիզմի և անոր պատերազմի փաստաբանութիւնը սատանձնող դարուս զինուորական ամենամեծ կազմակերպիչի՝ պատերազմի մասին արտասանած փառաբանութիւնը, խաղաղութեան վեհաժողովին մէջ, որուն պատասխանած է Ֆրանսացի հոյակապ գրագէտ՝ Կի տը Մօբասան։

Երբ Գերման ժեներալ Ֆոն Մոլթքէ կըսէ «արգելք ըլլալ ժողովուրդներու ահաւոր մաթերիալիզմի մէջ իյնալու», քօղարկուած լեզուով կը հասկցնէ որ պէտք է ժողովուրդը տգէտ և անգիտակից պահել և թոյլ չի տալ որ ան իր դասակարգային գիտակցութիւնը և շահերը ճանչնայ, իր դասակարգային ստրկութենէն ազատելու համար պայքար մղէ զինք շահագործողներու և ստրկացնողներու դէմ։ «Պատերազմը» կըսէ Մոլթքէ. «Սուրբ է. աստուածային հաստատութիւն մը, աշխարհի նուիրական օրէնքներէն մին, անիկա մարդոց մէջ կը պահպանէ բոլոր վսեմ և ազնիւ զգացումները, պատիւը, անշահախնդրութիւնը, առաքինութիւնը, քաջութիւնը, մէկ խօսքով արգէ՛ք կրլլայ անոնց՝ ահաւոր մաթերիալիզմի մէջ իյնալու»։

Երկրորդ օրը Կի տը՛ Մօբասան Փարիզեան մա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:34 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մուլին մէջ հետևեալ պատասխանը կուտայ... «Պատերազմի մարդիկ աշխարհի ժանտախտներն են, մենք կը կուլինք բռնութեան, տգիտութեան և այեն տեսակ արգելքներու դէմ, մեր թշուառ կեանքը նուազ տաժանելի ընելու: Բարերարներ, գիտական մարդիկ իրենց կեանքը կանգնեն հետախուզութեամբ որպէսզի կարելի ըլլայ օգնել կամ դիւրացնել իրենց եղբայր-մարդուն տառապանքները։ Խանդավառ իրենց այս օգտակար աշխատութեամբ, գիւտեր երևան կը հանեն, մարդկային գիտակցութիւնը կընդլայնեն, գիտութեան սահմանները կընդարձակեն այեն օր աշխարհի տալով կրթութեան բարօրութեան, հանգստի և զօրութեան նոր գումար մը։

«Պատերազմը կուգայ։ Վեց ամսայ միջոցին հրամանատարները աշխատանքի, համբերութեան և հանճարի քսան տարեայ արդիւնքները կը փճացընեն։ Ասիկա է, ինչ որ կը կոչեն «չիյնալ ահաւոր նիւթապաշտութեան մէջ»։

«Մենք տեսած ենք այս պատերազմը. տեսած ենք որ մարդիկ գազաններ դարձած ու կատաղած կսպաննեն հաճոյքի համար։ Երբ իրաւունքը գոյութենէ դադրած է այլ ևս, երբ օրէնքը մեռած է, երբ արդարութեան բոլոր գաղափարները աներևոյթացած են, կը տեսնենք անմեղ մարդիկ զընդակահար ինկած են ճամբուն վրայ, որովհետև անոնք վախէն փախած են։ Տեսած ենք մարդիկ իրենց նոր ատրճանակը փորձելու համար իրենց տիրոջ դռներուն չղթայուած շուներ զնդակահար ըրած են, տեսած ենք ռումբերու պայթեցումը դաշտերու մէջ մակաղած կովերու նախիրներու մէջ, ոչ մի պատճառաւ, բացի բանի մը վրայ կրակ թափելու հաճոյքին և քէյֆին համար։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:35 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

«Ասիկա կը կոչի «չինչալ էն ահաւորնիթաապաշտութեան մէջ»։ Երկիր արչաւել, մարդիկ բռնանալ, որոնք իրենց տունը կը պաշտպանեն և չեն կրեր զինուորի գլխարկ, այրել թշուառ կանանց տունները, որոնք հաց չունին, խորտակել կահ կարասիները, գողնալ իրեղէնները, գինին խմել իրենց գտած ճամբուն վրայ, այրել միլիոնաւոր ֆրանք արժող վառօդ և ետևը ձգել թշուառութիւն և քոլերա, ասիկա կը կոչի «չինչալ էն ահաւորնիթաապաշտութեան մէջ»։ Պատերազմի այս մարդիկը ի՞նչ ըրած են ապացուցանելու թէ իրենք մինչ իսկ ամենափոքր իմացականութիւն ունին։ Ոչի՛նչ։ Ի՞նչ հնարած են, թնդանօթ և հրացան։ Ահա այդչափ։ Զեռնասայլին հնարիչը իր այս պարզ և գործնական գաղափարովը աւելի օգուտ բերած չէ՞ մարդկութեան քան ժամանակակից բերդաշինութեանց հնարիչը։ Ի՞նչ մեաց Ցունասատանէն, գրքեր և մարմարիոններ։ Անիկա ա՛ւելի էր անով որ յաղթե՞ց, թէ անով որ արտաղրեց։

«Ոչ ոք իծնէ իրաւունք ունի ուրիշ մը կառավարելու։

«Ատիկա կարելի է կառավարուողներու կամքին և բարիքին համաձայն։

«Ով որ կը կառավարէ, այնչափ մեծ պարտականութեան մը ներքև է իսոյս տալու պատերազմէ որչափ նաւապետ մը ծովուն վրայ զգուշանալու է նաւաբեկումէ։ Երբ նաւապետ մը նաւ մը կը կորսընցնէ՝ կը քննի, կը դատապարտի անհոգութեան կամ նոյնիսկ անկարողութեան յանցանքով։ Ի՞նչու կառավարութիւնները պէտք չէ քաշին դատաստանի՝ ամեն պատերազմի հրատարակութենէն յետոյ։ Կը բաւէ որ մարդիկ հասկնային այդ,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:35 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

եթէ անոնք մերժէին սպանիլ առանց պատճառի, եթէ անոնք գործածէին իրենց զէնքերը անոնց դէմ, որոնք իրենց ձեռքերուն մէջ դրած էին ոճրապարտ նպատակներու համար, այդ երբ պատերազմը մեռած պիտի ըլլար»։

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Կառավարութիւնները իրենց հրատարակած պատերազմներու և գործած նախճիրներու և կոտորածներուն համար անպատիժ կը մնան և դատաստանի չեն կրնար քաշուիլ, որովհետև նոյն ինքն է դատաւորը՝ դասակարգային այս ընկերութեանց մէջ։ Ընկերութեան մէջ անհատ մը ոճիր մը կը գործէ, կառավարութիւնը անոր քաւել կուտայ իր արեամբ. կը բռնէ, կը պատժէ նոյնչափ մեղսակցութեամբ այն անձն ալ, որ կը թելադրէ և կը դրդէ ոճիրի գործողութեան, ո՛չ թէ անոր համար, որ մասնակի սպանութիւնը, անհատական ոճիրը պատիժի արժանի է, իսկ ընդհանուր և հաւաքական, մեծաքանակ մորթոտումները ներելի և արդար, այլ որովհետև այդ համայնական ջարդերու հրամանատարը կառավարութիւնն է, որը սոսկ գործիք և գործադրիչ մըն է տիրող դասակարգի շահերուն և հրամաններուն։

Ո՛չ թէ անհատական ոճրագործութիւնը խաղաղութեան, իսկ հաւաքական մարդասպանութիւնը խռովութեան կամ պատերազմի անունին տակ ներելի է գործադրել, այլ բառերը սոսկ ոճրագործներու կողմէն հնարուած դիմակներն են իրենց արարքը արդարացնելու, այլ անոր հաւաքը,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:35 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

որ իրենց դասակարգային տիրապետութեամբը զրութեան, ոյժին և իրաւունքին տէրը իրենք են։ Եթէ անհատական ոճիրը խաղաղութեան ատեն կը ծրագրուի, չէ՞ որ պատերազմի ծրագրերն ու արիւնհեղութիւններն ալ խաղաղ և մութ անկիւններու մէջ կը յղացուին։ Չէ՞ որ խաղաղութեան ատենն է որ կառավարութեանց գործիք մամուլը, բեմը, ամպիոնը ոչ թէ միայն պատերազմի դաշտ կը մղեն ժողովուրդը, այլ նաև կը զրգռեն անոնց ոճրագործական և գազանական ընազդները և սակայն այս բոլորը ոչ թէ միայն անպատիժ կը մնան, այլ նաև հայրենասիրական, կրօնասիրական և նոյնիսկ մարդասիրական երբեմն պարտականութիւն մը կատարած կը հռչակեն և անոնք, որոնք արիւնի և աւերի դաշտէն կը դառնան, հրամանատարէն սկսեալ մինչև յետին զինուորը, ո՛չ թէ միայն արդարութեան ատեանին առաջ չեն բերուիր, քանի որ իրենց ետևը, արեան ովկիաններ, արտասուքի և թշուառութեան դաշտեր ձգած են, այլ հերոսական բրաբիոնը՝ փառքի պսակը և յաղթական կամարները կը կազմեն անոնց համար։ Եթէ անհատին կեանքին դէմ ոճիր մը աններելի է, ո՞րչափ աւելի անարդարանալի է ազգերու դէմ ոճիր մը, ցեղեր, սերունդներ և դարաւոր աշխատանքներ փճացնելը։ Այս բոլորը, արդարութեան, ճշմարտութեան այս ըմբռնումը ծագում կառնէ դասակարգային գիտակցութենէն և ըմբռնումէն։ Տիրող դասակարգը, իր ձեռքին մէջ բռնած քաղաքական մեքենան գործադրել կուտայ իր հրամանները։ Կառավարութեան գործադիր մարմինը կը հպատակի, օրէնսդրական ճիւղը անոր դասակարգային տեսութիւնները և գործերը օրէնքի կը վերածէ. իսկ դատաստանական

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:35 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կազմը, այդ օրէնքները կը հաստատէ և կը սրբագործէ։ Ո՞վ է որ զանոնք դատաստանի պիտի քաշէ, ո՞ր ոյժը, ո՞ր ձեռքն է, որ անոնց օձիքներէն պիտի բռնէ և հաշիւ պահանջէ. այդ դարաւոր, պատմական և հաւաքական ոճրագործութեանց հաժար։ Տիրող դասակարգերը, ոչ թէ միայն քաղաքական կազմը իրենց ձեռքին մէջ բռնած այլ նաև ոստիկանական ոյժը, զինուորական մեքենան, որոնք ոչ թէ միայն իրենց հրամանները կը կատարեն, այլ նաև զիրենք կը պաշտպանեն յանկարծակի պայթումներէ և զայրոյթներէ։ Այո՛, անոնք օր մը ատեան պիտի քաշուին. պիտի տան իրենց դարաւոր մարդասպանութեանց հաշիւը, երբ ժողովուրդը իր զէնքը դարձնէ անոնց դէմ, որոնք «իր ձեռքերուն մէջ դրած են զայն» կըսէ Մօրասան։

Պէտք չկայ զէնքը դարձնել և անոնց կուրծքը աբեան կարմիրով ներկել. այլ կը բաւէ որ անոնց մարդասպան հրահանգները անոնց երեսին նետէ և ծառանայ անոնց դէմ։ Այդ ժողովուրդը, բուն իսկ իր սուրը իր կեանքին դէմ գործածող հլու և ստրուկ գործիքն է, որ տեղ մը զինուոր անունով կը ճանչցուի, ուրիշ տեղ մը ոստիկան, ժանտարմա, միլիցիա, ծովազօրք. տեղ մը գործաւոր, աշխատաւոր, ուրիշ տեղ մը ծառայ և պաշտօնեայ անուններով կը հասկցուի։ Այդ օրը, պատերազմի թաղումը պիտի կատարէ այդ ժողովուրդը, որ չահագործուող և տառապող դասակարգի դրօշը կը կրէ, երբ գիտնայ իր ահաւոր դրութիւնը, իր չահը և իրաւունքը, իր հսկայական ոյժը և դասակարգային գիտակցութիւնը։

Ներկայ քափիտալիստ դասակարգը գիտնալով այդ ժողովուրդի ներսը քնացող վիթխարի ոյժը

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:35 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կը ջանայ զայն վամփիրի թևերով փայփայել, իր քնոյ մէջը պահել, ո՛չ թէ միայն քաղաքական մեքենան կը զօրացնէ ամեն ուղղութեամբ, այլ միլիթարիզմը, ներկայ քաղաքակրթութեան տուած բոլոր հանճարի արդիւնքովը կ՚օժտէ և կը կատարելագործէ զայն, և զինուորը անոր մէջ հլու և հնազանդ, անկամ և անհոգի մեքենայ մը կը չինէ ֆիզիքապէս, մտաւորապէս և բարոյապէս սնանկ և աւելորդ գոյութիւն մը կը դարձնէ, անոր մէջ պահելով սոսկ կոպիտ, կենդանական ոյժ մը, որ ամեն պարագայի տակ իր եղեռնական հրամանները կատարէ։

ՄԻԼԻՏԱՐԻԶՄԸ

Քափիտալիզմի ներկայ դրութեան տակ պատերազմի փոթորիկները չեն միայն որ աչխարհաւեր նախճիրներ կը գործեն։ Քափիտալիզմի չարժուն կամ կանգուն բանակներն ինքնին, պատերազմներու աւերը և չարիքը կը գործեն։ Խաղաղութեան ատեն բանակը ինքնին իր մէջ պատերազմ մ՚է, այնտեղ օր աւուր աճող ռազմական գործողութիւնները, զէնքերու, թնդանօթներու բարդումը և զարգացումը, միլիոնաւոր տօլարներու յումպէտս փճացումը՝ բանակի դրութեան մէջ ստեղծած են պատերազմ, միլիոնաւոր մարդիկ, իրենց ընտանիքի ծոգէն, իրենց նիւթական օճախներէն կը քաշուին, իրենց ամենէն բեղմնաւոր և կայտառ տարիքին մէջ, փոխանակ մարդկութեան՝ իրենց աչխատանքի պարտքը տալու կը նետուին բանակին մէջ, հոն փճանալու և ոչնչանալու ամենասոսկալի

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:35 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բռնապետական օրէնքներու տակ։ Քափիտալիզմը այդ օրէնքներու գործադրութիւնը «կարգապահութիւն» անուան կեղծիքին սակ կ'ուզէ բարձրացընել զինուորական բռնապետութիւնը, «զինուորական կարգապահութեան» մակդիրով։ Քափիտալիզմը՝ բանակը և նաւատորմիղը վարձկանութեան հասցնելով չի բաւականացաւ, վարձկանները իրենց բաժինը բռնութեան և տգիտութեան վարձքերով հատուցանել։ Երբ մասամբ զինուորներ մրցակի և սուրի տակ կը քչին զօրանոցներ կան ոմանք որ քափիտալիստի տուած կեղծ դեղահատերով, հաժոզուած և «հայրենասիրական» պարտականութիւն կը ճանչնան բանակին մէջ «բարի և կարգապահ» զինուոր ըլլալ և մարդ սպաննելը առանց մտածելու թէ զինուորական այդ բռնապետութիւնները բուն իսկ իրեն դէմ և գիտակցութեան արևը խափանելու համար են։ Ամենէն զարհուրելի բռնապետութիւնները՝ որ քաղաքական իշխանութեան գլուխ եղած են մարդկային պատմութեան մէջ, ո՛չ մէկը փոքր չափով մը հաւասարած է ներկայ քափիտալիստ զինուորական «կարգապահութեան» հետ։ Այնտեղ, էն փոքր յանցանքը, էն ծանր պատժին կ'արժանանայ, էն փոքր տրտունջը դաւաճանութիւն մըն է. զինուորին հոգին, միտքը և մարմինը ծախուած հրամանատարին, անոր տրամադրութեան տակ է զայն ինչպէս գործածելը։ Կարգապահութեան սկզբունքը վերէն չի գար, կառավարուողներու կամքէն կը ծնի։ Ա՛յն կարգերը և օրէնքները պահել և հնազանդիլ պարտաւոր է անհատը, երբ անոնք իր կամքով և հաւանութեամբ մարմին ստացած են։ Այդ իսկ պատճառաւ քափիտալիզմը իր էն «կարգապահ և հլու» զինուորին

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:36 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մէջ հակառակ այն բոլոր դասակարգային գաղա-
փարներու ներարկումին և նախապաշարումին, ի-
րաւունքի և արդարութեան զգացումը չէ կրցած
բոցավառել, առ առաւելն պատերազմական թըմ-
բուկներու և փողի ազդեցութեան տակ յանուն
կրօնի, ազգի և հայրենիքի ժոլեռանդութիւնը և
տգիտութիւնը զրգռած և արձակած զայն, որ իր
դրացին յօշոտէ։

Երևակայիլ անգամ մը այն միլիոնները, որոնք
կը մսխուին բանակներու և նաւատորմիղներու,
որոնց գումարը ամենէն յետին կառավարութեանց
մէջ, իրենց կրթական, տնտեսական և ընկերական
զարգացման համար ծախսուած գումարին տասն
անգամը կ'ըլլայ, ու այսպէս ամիսներ և տարի-
ներ անվերջ, միլիոններ արժող նաւատորմիղներ
ծովերու մէջ կը լողան իրենց բոլոր սպառազինու-
թեամբ, զինուորներ և պաշտօնեաներ իրենց կեան-
քը կը քաշքշեն զօրանոցներու անբարոյական խոր-
շերու մէջ։ Մարդիկ վերջապէս, որոնք կարող էին
օգտակար աշխատանքի անիւին լծելով մարդկու-
թեան ահագին օրհնութիւններ բերել, այսօր չա-
րիք և պատուհաս եղած են, սոսկ այն նպատա-
կին, այն շահին համար, որ մէկ ազգի մը քափի-
տալիստը միջազգային չուկային վրայ ինքը միայն
տիրող հանդիսանայ։ Այս բոլորը ի գին, ի վնաս
աշխատող, արտադրող և սակայն շահագործուող և
տառապող դասակարգին, դասակարգ մը, որ իր
անգիտակցութեամբ ինքը պատանդան եղած է
այդ արիւնարբու մողոքին բուն իսկ իր արեան
զոհաբերութեամբը։ Այդ զինուորին, քափիտալիզմի
այդ «բարի և կարգապահ» զինուորին է որ ձէք
Լընտըն կ'ուղղէ հետևեալ տողերը։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:36 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

«Երիտասարդներ, զինուորութիւնը ձեր կեանքին է՛ն անարգ նպատակն է։ «Լաւ» զինուորը բնաւ չի փորձեր ճշմարիտը անիրաւէն զանազանել. բնա՛ւ չի խորհիր, բնա՛ւ չի տրամաբաներ։ Եթէ իրեն հրամայուի կրակել իր ծնողներուն, իր ազգականներուն և իր դրացիներուն վրայ, կը հնազանդի առանց վարանման։ Եթէ իրեն հրամայուի կրակել բազմամբոխ փողոցի մը վրայ, ուր խեղճեր հաց կաղաղակեն, կը հնազանդի, և կը տեսնէ ոլեզարդ ծերունիներ կարմիրով ներկուած. կը տեսնէ կնոջատու հոսանքին դուրս խուժումը կանանց կուրծքերէն, սակայն ո՛չ խղճի խայթ կզգայ և ո՛չ ցաւակցութիւն։ Եթէ իրեն հրամայուի իբրև սպանիչ ջոկատ գլխատել հերոս մը կամ բարեբար մը, կը կրակէ անոր վրայ առանց տատանման, թէև գիտէ թէ գնդակը պիտի մխուի է՛ն ազնիւ սրտի մը մէջ, որ երբէք բաբախած է մարդկային կուրծքին տակ։

«Բարի զինուորը՝ կոյր, անսիրտ, անհոգի, մարդասպան մեքենայ մըն է։ Մարդ չէ անիկա, զազան մըն ալ չէ, որովհետև գազանները կսպաննեն միայն ինքնապաշտպանութեան ատեն։ Ամեն ինչ որ մարդուն էութիւնը կը կազմէ՝ հրաժարած են իրմէն, երբ զինուորագրութեան ցանկին մէջ անցած է։ Իր միտքը, իր խիղճը, այո՛, բուն իսկ իր հոգին իր հրամանատարին տրամադրութեան ներքև են։ Զինուոր ըլլալէ աւելի մարդ չի կրնար ստորնանալ, անդունդ մըն է անիկա, որուն յատակը գտնել չէ կարելի։ Տղաքները հեռու պահեցէք բանակէն։ Անիկա դժոխք է։ Անկցի՛ բանակը և նաւատորմիղը։ Մենք մարդասպան հաստատութիւններու պէտք չունինք, կենսաբաշխ հաստատութեանց կը կարօտինք»։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:36 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Պատերազմներն ալ իրենց էթիքան ունին, պատերազմող կողմերը բարոյական պարտականութիւն ստանձնած են, այնպիսի պատերազմական գործողութիւններէ հեռու մնալ, որոնք նախկին դարերու պատերազմներու մէջ կը գործադրուէին և բարբարոսական կը սեպուին։ Բայց ատիկա պատճառ չէ, որ քաղաքակրթութեան տուած բարբարոսական գործողութիւնները և զէնքերը գործադրութեան չի մտնեն։

Պելճիքայի չէզոքութեան բռնաբարումէն սկսած մինչև անզէն և անպաշտպան քաղաքներու ռմբակոծումը. ցէփլիններու, հրազէնդակներու տարափը, ենթածովեաներու բարբարոսական յօշոտումը, պատմական շէնքերու և գեղարուեստական գործերու քանդումը և աւերումը, թշնամի կառավարութեանց խաղաղ բնակչութեանց հալածումը և սպանութիւնը, այս բոլորը կը հաստատեն, որ նախնական և բարբարոս դարերէ ժառանգուած պատերազմի գործողութեանց և գործադրութեանց մէջ բան մը փոխուած չէ, եթէ աւելի չէ զարգացած ներկայ 20րդ դարու սեմին վրայ։

Միջազգային օրէնքները, դաշնագրերը, իրաւարարական ատեաններու որոշումները «թղթի կտորներ» եղած են։ Պատերազմի բարոյագիտութիւնը սոսկ զէնք մ'է զօրաւորին կողմէն տկարին դէմ։ Քանի որ տիրապետութիւնը կայ, քանի որ շահի զսպանակը լարուած է կայ նաև պատերազմը, որը ինքնին բոլոր բարոյական օրէնքներու ժիտումն է, ինչպէս իր երկրին մէջ օրէնքին բացասումն է, նոյնն է միջազգային կեանքին մէջ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:36 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Այս քսաներորդ դարու պատերազմը բարբարոսութեան և խժդժութեան կողմէն կերազանցեց նախկինները։ Պատերազմը ոչ միայն մեքենականի, գիտականի վերածեց, այլ նաև այնպիսի գործողութիւններ երևան դրաւ որ վայրագութեան կողմէ աննախընթաց է։ Թրքական արեան բաղնիքները, որոնք այսօր տարագրութեան կարմիր էջեր կը բանան, Գերման գիտութեան, Գերման ոազմական մտքի արդիւնք են, որը գիտական քուլտուրական (Kultur) ամեն արժանիք ունի և սակայն չի մերկանար բարբարոսական ամենէն խորունկ գրոշմէն։

Վայրենին, երբ պատերազմի կերթար և նետը թոյնին մէջ կը թաթխէր ու յետոյ կարձակէր, որպէսզի թշնամուն ստացած վէրքը մահացու ըլլար, այսօր դատապարտելի է ամենուն կողմէն, որովհետև ատիկա վատ և ստոր միջոց մը կը նըկատուի պատերազմին մէջ։

Բայց ի՞նչ է պատերազմին նպատակը,— թշնամին յաղթել, շատ մարդ սպաննել, շուտ սպաննել, աւերել, քանդել թշնամուն ապաստարանը, ըլլայ այն բերդ, մարտկոց, ամրոց թէ գիւղեր, քաղաքներ թէ արտադրութեան հաստատութիւններ։ Կը բաւէ որ թշնամին կատարելապէս կը բնաջնջի։ Մի՞ակ նպատակը յաղթանակը ապահովելն է. ի՞նչով մեղաւոր է վայրենին, երբ կը տեսնէ, թէ իր աղեղը այնչափ անկատար զէնք մըն է թշնամին բնաջնջելու, և հետևաբար, յաղթելու, անոր ծայրը թոյնով կօծէ, միթէ՞ հազար անգամ բարբարոսական չեն այն, քրուփի կէթլիկ կընի, Մաքսիմի երախներէ նետուած անաւոր կրակի և երկաթի գընդերը որոնք մէկ վայրկեանի մէջ հազարաւոր կեանքեր կը հնձեն ամենէն մահացու կերպովը։ Թու-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:36 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նաւոր աղեղը գատապարտող պատերազմական է-թիքան ինչո՞ւ չի գատապարտեր, այն մահացու ռումբերը, տրմտրմ պուլէթները, թոլփիտոները և հազար ու մէկ տեսակ արիւնի և աւերածութեան նոր և կատարելագործուած զէնքերը։ Ի՞նչու չի գատապարտեր այն նոր հնարուածները և հնարութիքները, որոնք ամեն կատարելութիւն ունի և գաղտնաբար կը պահէ, որպէսզի եթէ պատերազմի փողը հնչէ յանկարծակիի բերէ և կարող ըլլայ իր թշնամին անակնկալի առաջ դնել ամենակատարելագործուած և ամենէն արագ մարդասպանութեան ձևերով և գործողութեամբ։ Ուրեմն, այդ բարոյագիտական սկզբունքները, ըլլայ պատերազմի թէ ընկերական խաղաղ կեանքի մէջ, գործիքներու, զէնքերու համեմատութեան և չափերու սկզբունքին մէջ են։ Թունաւոր նետը գատապարտելի է, որովհետև այլևս անգործածելի է, հինցած և արդիւնք առաջ չի կրնար բերել, քանի որ երևան եկած են աւելի զարգացած գործիքներ։ Պատերազմող կողմերը, որոնք աւելի կատարեալ զէնքերով զինուած են, յանուն քաղաքակրթութեան աղաղակ կը բարձրացնեն նախկին գործիքներուն դէմ որպէս բարբարոսական, քանի որ իրենք իրենց չահատակութիւնները և յաղթանակը կրնան տանիլ նորագոյն միջոցներով։

Իթթիհատական անարգ և խղդիչ գրաքննութեան ներքև ասկից աւելի սուր լեզուով մը կարելի չէր խօսիլ այն ատեն, և սակայն ճշմարտութենէ հեռու չէր և այսօր իսկ կը հաստատուի թէ թուրքերը ինչ որ բարբարոսական ընազդներ և արարքներ ունէին և ոչ մէկը կրնայ բաղդատուիլ այս պատերազմի օրով գործադրուած զարհուրելի ջարդերու,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:36 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

առևանգումներու և տարագրութեանց հետ որոնց ծրագրողը, թելադրողը և նոյնիսկ գործադրել տուողը Գերման «քրիստոնեայ» և «քաղաքակիրթ» կառավարութիւնն է։ Թուրքերը խժդժութեանց բազմաթիւ և «գիտական» դասեր առին գերմաններէն, որոնք Գելճիքայի, Լեհաստանի և Սելսիոյ արտերուն մէջ մարդկութիւնը հանդիսատես լրիւն պատմութեան մէջ չերևցած աննախընթաց ոճիրներու։

Կը դատապարտենք Թուրքերը, որոնք պատերազմներու և ջարդերու ատեն չատ խուժդուժ արարքները կը գործեն, բայց պատերազմող երկիրներէն նոյնիսկ արդի ժամանակներուն մէջ ո՞րը պակաս մնացած է անկէ։ Գալլանեան վերջին պատերազմներու մէջ Գուլղար, Յոյն և Սերպ խժդրժութիւնները ի՞նչով պակաս էին անկէ. բայց չէ՞ որ իրենք «խաչի և մահիկ»ի կռիւ ալ չունէին, ո՛չ ալ «քրիստոնեայ քաղաքակրթութիւնը» «իսլամ բարբարոս յետադիմութեան» դէմ էր։ Անոնք եղբայրներ էին, կրօնքով, նոյնիսկ լեզուով, արիւնով և ազանդութիւններով։ Ասոնք ինչո՞ւ այսպէս իրար կը մորթոտէին «թրքական բարբարոսութեամբ»։ Տիրող դասակարգի չահին և տիրապետութեան համար մղուած պատերազմները, յաղթանակը ապահովելու համար միջոցի մէջ խտրութիւն չեն դներ, հոն ո՛չ կրօն, ո՛չ ազգ, ո՛չ հայրենիք կայ, ո՛չ արդարութիւն, ո՛չ բարոյագիտութիւն և ո՛չ մէկ բան։ Բանակը և մարդասպան մեքենաները կարելի է ամեն ուղղութեամբ չարժել, ամեն տեսակ դիմակի և ծպտումներու տակ։ Եթէ մի քիչ «հանրային կարծիքը» այդպիսի գործողութեանց դէմ կաղապար ստացած է և կարելի չէ զայն մամլով ուրեք-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:36 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մով անմիջապէս փոխել, հրապարակէն կզգուշանան և գաղտնաբար, քաղերու և վարագոյրներու տակ կը գործադրեն իրենց խուժդուժ արարքները հրապարակով հակառակորդին վրայ նետելով։ Ո՞վ կարող է և իրաւունք կրնայ ստանալ պատերազմի ներքին չարքերը թափանցել և իրողութիւններու իրազեկ ըլլալ, առանց բանակի բռնապետներու կամքին և հաւանութեան: Էն հասարակ պատերազմական լուրերը խիստ գրաքննութեան բովէն անցնելով, այսօր կարելի է ըսել հրապարակուած տեղեկութիւններէն առ նւազն կէսը խեղաթիւրուած և կեղծուած են։

Պատերազմի ատեն գերիները պահել կամ ըսպաննելը ոչ մէկ քաղաքակրթական ըմբռնումէ կամ մարդասիրական զգացումէ կը ծագի այլ ժամանակի արտադրութեան վիճակէն, պատերազմողներու տընտեսական պայմաններէն։ Ներկայ Եւրոպական պատերազմը այնչափ դասեր և օրինակներ բերաւ որ զանոնք հաւաքել և հոս ներկայացնելն իսկ աւելորդ պիտի ըլլար։ Մէկ հատ մը յիշել բաւական պիտի ըլլայ որը շատ կարկառուն և յատկանշական է, Տօքթ. Փոթոֆ որ 9 տարի Բայխստակի անդամ եղած է ինչ կը գրէ իր «Ժողովուրդ և կառավարութիւն» գրքոյկին մէջ ամենայն պաղարիւնութեամբ։ «Մարդ կրնա՞յ ոևէ տարակոյս ունենալ թէ Գերման Ընդհանուր Սպայակոյտը վարանի գործադրելու ծայրայեղ միջոցներ։ Թէ Գերմանիա իրապէս սովամահութեան եզրը հասնի։ Եթէ պէտք ըլլայ, մենք պէտք է արտաքսենք բոլոր բնակիչները այն երկիրներէն որ մեր բանակը գրաւած է և քշենք զանոնք թշնամիին կահմաններուն մէջ, եթէ պէտք ըլլայ, մենք պէտք է սպանենք հազարա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:42 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ղոր բանտարկեալները, որոնք մեր ուտեստը կսպառեն։

«Ատիկա սարսափելի պիտի ըլլար բայց և անխուսափելի, քանի որ ուրիշ կերպ չպիտի ըլլար գիմանալու համար»։

Պատերազմի գերիները չեն սպաններ այսօր, որպէս նախորդ դարերու բարբարոսական արարք։ Անցեալին մէջ կսպաննէին ոչ թէ աւելի բարբարոս էին գերեվարները, այլ որովհետև թշնամին յաղթելու համար միջոց մըն էր։ Գերիները պահել, խնամել պէտք էր, այդ ահագին ծանրութիւնը պատերազմող կողմերու վրայ, վտանգաւոր բեռներ էին, իրենց նիւթական ոյժը և կարողութիւնը չէին կրնար տոկալ թէ անոնք խնամել և թէ պատերազմ մղել առանց վտանգելու իրենց յաղթութեան հաւանականութիւնը։

Հիմա, որ պատերազմող կողմերը նիւթական անսպառ պիտոյքներ կամբարեն, գերիները ոչ թէ սպաննելը աւելորդ և հետևաբար բարբարոսական է, այլ նաև շահաբեր, որովհետև պատերազմի ատեն կաշխատցնեն և վերջաւորութեան ատեն խոշոր փրկագիններով զանոնք ետ կը դարձնեն։

Եթէ Թուրքերը գերիները ջարդեցին, որովհետև անկարող էին պահելու, մանաւանդ որ յաղթանակի յոյսն ալ աներևոյթացած էր, և հետևաբար, ապագային ալ անշահաբեր, է՛ն նպաստաւոր կերպը անմիջապէս այդ բեռէն ազատիլն էր։ Այսպէս կընեն և ըրած են բոլոր կուռողները, իրենց տեղին, պայմանին, պարագային և նիւթական վիճակին համեմատ։

ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Յաղթելու, տիրապետելու երկու միջոց կայ,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:42 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

յեսադիմական, որ բարբարոսական կը կոչի, յառաջդիմական, որի «քաղաքակրթական» անունը կուտան։ Ցանցանքը միջոցներուն մէջ չէ, այլ սկզբունքին տիրապետելու սկզբունքն է յանցաւոր, ո՛չ թէ միջոցը, միջոցները տեղին և ժամանակին համեմատ կը փոխուին։

Քանի որ, ներկայ «քաղաքակիրթ» կառավարութիւնները կրնան քաղաքակրթութեան միջոցով հասնիլ իրենց նպատակին, ի՞նչ կարիք կայ յեսադիմական և բարբարոսական միջոցներու։

Թիւրքիոյ չովինիզմը երբ չունի յառաջդիմական ոեւէ միջոց, զուրկ է քաղաքակրթութեան ընձեռած տիրապետութեան բոլոր գործիքներէն, իր տիրապետութիւնը հաստատելու համար պիտի դիմէր նախկին միջոցներուն։ Երբ չունի քաղաքակրթութիւն և չի կրնար զարգացմամբ և կրթութեամբ իր ձուլման քաղաքականութեան հասնիլ, պիտի դիմէ իր ունեցած նախնական միջնադարեան միջոցներուն՝ ջարդի, հալածանքի և բռնութեան։

Որչափ որ միջոցները յանցաւոր չեն բայց միջոցները աւելի կամ պակաս անգործնական և անարդիւնաբեր են ինչպէս որ առագաստանաւը չի կրնար մրցիլ չոգենաւին հետ և տեղ հասնիլ ուալիքներուն կեր կըլլայ, մանաւանդ ալեկոծ ծովերու վրայ, այսպէս ալ միջնադարեան միջոցները անկարող կըլլան յաղթանակը ապահովել, եթէ արդէն իրենց պարտութիւնը չի յօրինեն և գերեզմանը չինեն իրենց նպատակով և միջոցով մէկտեղ։ Անգլիա պէտք չունի այդ նախկին միջոցները գործադրելու, իրեն ունեցած քաղաքակրթական միջոցները, խաղաղ և անսայթաք կը հասցնեն իր նպատակին, որոնց դրօշակին վրայ գրուած կայ նաև

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:42 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

«մարդասիրական» և քաղաքակրթական կնիքներ ալ, ի պահանջել հարկին միայն իր դիմակը կը ձգէ և իր իսկութեամբ երևան կուգայ։ Ռուսիան երբ երկու ձեռքով, միջոցով իր յաղթանակը կուզէ ապահովել որովհետև իր զարգացման աստիճանը տակաւին երկակենցաղ է, այսպէս համեմատաբար բոլորն ալ իրենց ունեցած պայմաններով կը կուին մերթ «բարբարոսական» միջոցներով և մերթ «քաղաքակրթական»։ Անկարող եմ հավատալ, որ այսօր Թիւրքիան, երբ ունենար ֆրանսական կրթութիւնը և զարգացումը իր ազգայնական տիրապետութիւնը Ջարդի և Թալանի քաղաքակրթութեամբ տանէր։

Շատ հասկնալի է որ, ասով ո՛չ կարդարացընենք Թրքական բարբարոս քաղաքականութիւնը և ո՛չ ալ նախնական-միջնադարեան միջոցները։ Ցառաջդիմութիւնը տիեզերական է և բնական. ո՛չ ոք կարող է անոր անիւը ետ դարձնել և բնութեան դէմ գործել, նորը, յառաջացածը որչափ որ իր զարգացման մէջ չարիքը մեծցնէ, միշտ նախընտրելի է, հետևաբար քաղաքակրթական։ Այն բոլոր միջոցները որոնք մարդկութիւնը իր զօրաւոր ճամբորդութեան միջոցին հաւաքած և քաղաքակրթութեան աչտարակը յօրինած է, մենք պարտաւորենք անոր ամենավերջին և բարձր աստիճանին վրայ կանգնել, որչափ որ վտանգաւոր և տաժանագին ըլլայ մեր դիրքը։ Դատապարտելի են նախնական միջոցները, որովհետև իրենք իրենց ժամանակը ապրած են, կատարած են իրենց միսիան։ Այն որ անժամանակակից է, անօգտակար է, այն որ անօգուտ է, գէշ է և վնասակար և հետևաբար անարդար, անիրաւ և բարբարոսական։ Անտարակոյս դատապարտելի և խոտելի են այն միջնադարեան

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:42 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

միջոցները, որոնք ըլլան թուրքերու կամ ուրիշ յետամնաց ազգերու կողմէն, անոնք անկարող են ըմբռնելու գարուն ոգին, փոխանակ նոր միջոցներով զինուելու, գիտութեան, կրթութեան միջոցով պայքարելու, տգիտութեամբ, նախապաշարումով և մոլեռանդութեամբ կը տոգորեն ժողովուրդը և այդ մութ ձեռքով կը կատարեն իրենց վայրագ և անգութ արարքները։ Իրենց մարդասպանութեան միջոցները պատերազմի դաշտի վրայ ճակատեցնելու համար, երբ անկարող կըլլան իրաւունքի և արդարութեան անունով, ատելութեամբ և ֆանատիկոսութեամբ զանոնք կը թունաւորեն։ Այդ պատճառաւ տգէտը և մոլեռանդը աւելի բարբարոս կըլլան և նոյն իսկ աւելի կատաղի կը կուին որովհետև այդպէս սնած ու մեծցած են։

Այսպէս ըլլալով հանդերձ, չէ կարելի անտեսել թէ ամեն դարու և ամեն ընկերական կարգ ու սարքի տակ չեն գտնուած անհատներ, որոնք իրենց ապրած միջավայրէն բարձր չի կանգնին, կամ յատակը չիջնեն։ Այնպէս որ, անհատական դէպքեր կամ առանձնակի պարագաներ միշտ բացառութիւններ կը կազմեն։ Ամենէն բարձր և արդարութեան համար կռիւ մղող գիտակից բանակի մը մէջ անկարելի է չպատահին, եթէ ոչ ընդհանուր, գէթ մասնակի խժդժութիւններ և բարբարոսութիւններ, որոնք իրենցմէ իսկ դատապարտելի չըլլան։ Նոյնպէս ամենէն վայրագ և կատաղի, տգէտ և մոլեռանդ շարքերու մէջ չըլլան անհատներ, մալղկ որ ամենէն ազնիւ և մարդասիրական զգացումներով տոգորուող և գործողներ չըլլան, որովհետև բանակը, պատերազմը մարդկային դժոխք է ուր տեղ մարդուն վայրագ բնազդները կարտայայտին։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:42 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Անիկա, նաև ընկերական միջավայրի մէկ ալարուածն է, ուր տեղ մարդկային քաղաքակրթութեան պատկերը կը ցոլանայ։

ՔԱՓԻԴԱԼԻԶՄԸ ՀԱԿԱՌԱԿ Է ՊԱՏԵՐԱԶՄԻ

Քանի որ ներկայ դրութեան ընկերական չարիքները և պատերազմի ահաւորութիւնները կը վերագրենք Քափիդալիզմին, արդար ըլլալու համար ըսելու ենք, որ քափիդալիստը իսրտէ և հոգեւին ոչ թէ համակիր է պատերազմներու, այլ հակառակ է անոնց, այդ իսկ դարձեալ իր չահի տեսակէտով։ Քափիդալիստին շատ աւելի նպաստաւոր է, անվառոդ և անպատերազմ գրաւումները, անժխոր և անսայթաք թափանցումները, քան պատերազմական արկածախնդրութիւնները։

Անոր համար միսիոնարական առաքելութիւնները քաղաքակրթական թափանցումները հոգ չէ, թէ որչափ պատկառելի գումարներով օժանդակէ շատ աւելի ձեռնտու և շահաբեր է քան թնդանօթներու գոռումը և գնդակներու սուլումը, կը բաւէ որ անոնք կարենան հարթել երկաթուղիներու գծերուն ճամբան և օրհնեն գործարաններու հիմնարկէքը։ Բուն իսկ այդ պատճառաւ է որ քափիթալիզմը կը ջանայ խաղաղ բաժանումներով վերջացնել Չինաստանը, Պարսկաստանը համաձայնութեան դաշինքով վճռել, Թիւրքիան «տնտեսական ազդեցութեանց» երախով կլանել։ Քափիթալիզմը՝ չահի, տնտեսական չահի ետևէ է, երբ պատերազմները իր կողոպտած չահերէն խոշոր բաժիններ կը պահանջեն, սիրայոժար

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:43 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

է կարճ ճանապարհով իր նպատակին հասնիլ, պատերազմին բարոյական կողմը զինքը չի հետաքրքրեր, ոչ ալ այն ֆիզիքական կորուստները, որոնք իր կաչին վրայ կ'զգայ քանի որ, իր մէկ մատը իսկ չարիւներ, այդ թող չահագործուող աշխատաւորները զգան, որոնք խաղաղութեան ատեն իր կթան կովերն են, իսկ պատերազմի պարագային իր մսացու եզները։ Քափիթալիզմի աշխարհակալութիւնները նախկիններէն բոլորովին տարբեր են, երկիրներ կը պահանջէ ոչ թէ իր մականին տակ պահելու, տիրելու, որոնք չատ անգամ իր շահուզէնին մէջ խոշոր բաց մը կը ձգեն, այլ երկիրներ որոնք իրեն կաթ ու մեղր բերեն, հոգ չէ անոնք ինչպէս ուզեն կառավարուիլ, ինքնորէն, անկախ թէ միացած «մայր հայրենիքին», կը բաւէ որ դռները ոչ թէ միայն իրեն համար բաց ըլլան և ոչ ուրիշ մրցակցի մը, այլ իր զինանշանը կախուած ըլլայ անոնց վրայ։ Քափիթալիզմը իր այդ խաղաղութեան կոչերուն և մանիֆէստներուն մէջ ոչ թէ անկեղծ է և խօսքի սահմանէն անդին չանցնիր այլ նաև գործնականին մէջ ալ չի յամենար երևան բերելու խաղաղութեան զէնընկեցութեան և կանգուն բանակներու ջնջումը և այդ անկեղծութիւնը ապացուցանելու համար անիկա կը դիմէ նաև անպաշտօն կամ ժողովրդական արտայայտութիւններու և ջանքերու, ինչպէս նաև պաշտօնական, դիւանագիտական միջոցներու։ Խաղաղութեան այն միջազգային ժողովները, որոնք ամեն տարի երկրէ երկիր կը ճամբորդեն հանրային կարծիքը պատրաստելու, այդ ծախքերը բոլորովին յատկացուած չեն քափիթալիզմի վարձկաններու ժամանցին և հաճոյալի ճամբորդութեանց համար, քափիթալիստը

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:43 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

իր չանուն մէջ թէ՛ խորամանկ է և թէ՛ ժլատ, մէկ չի տար տասը չապահովելու համար։ Խաղաղութեան այն առաքեալները, որոնք խաղաղութեան ձիթենին իրենց ձեռքին բռնած, ծովեր կը կտրեն, աշխարհներ կը ճամբորդեն, օրերով չարաչար կը յոգնին միտք և մարմին մաշեցնելով. հակառակ իրենց թափած բուռն ջանքերուն պատերազմները աւելի բորբոքած և կատաղի երևոյթ կը ստանան, անզօր կը հանդիսանան իրենց միսիային մէջ։ Անոնց համոզման անկեղծութեան և հաւատքին մէջ մենք բիծեր չենք ուզեր փնտռել, թէ կան անոնց մէջ գիտակից վարձկաններ, բազմաթիւ են նաև անգիտակից ջերմեռանդ հաւատացեալներ, բայց անոնք անկարող են ըմբռնելու դարուն բուն իմաստութեան ոգին, չեն կրցած ըմբռնել և թափանցել թէ իրենց բոլոր զգացումի խօսքերը, սրտի աղերսները անգայտ և սնամէջ պղպջակներու պէս կերթան կը բաղխին չահի և տիրապետութեան ժայռին և հոն կը մեռնին անյիշատակ։

Եթէ զգացումներով դարաւոր բարբարոսութիւնները վերջանային մտքի, սրտի և զգացումի այս բոլոր մշակումներով մարդիկ այնչափ ազնուացած և զգայնիկ եղած պիտի ըլլային, որ զերբնական էակներ դառնային։ Մեր փափկասիրտ և ըզգայուն քափիթալիստները որոնք այլևայլ անուններով անասնապաշտական ընկերութիւններ կազմած են և հազարաւորներ տրամադրած են անոնց, կենդանիները մարդկային խոշտանգումներէ և գանակոծումներէ ազատելու և ի հարկին այդպէս վարուողները պատժելու համար զանազան օրէնքներ անցուցած են իրենց ծառաներու ձեռքով, միթէ այնչափ անգութ և վայրագ են, որ ոչ թէ միայն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:43 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

չեն տեսներ իրենց եղբայր արարածին անհամեմատ տառապանքները, այլ նաև իրենք ի գործ կը դնեն այն զրկանքներն ու խժդժութիւնները, որոնք որևէ կենդանիի վրայ գործադրել բարբարոսական պիտի սեպուէր։

Ձիու մը ժտրակումը, չան մը գանակոծումը և կատուի մը խոշտանգումը քափիթալիստին զգայնիկ ջիղերը թունդ կը հանեն, որովհետև գիտէ թէ անոնց տառապանքին համար որչափ արցունք թափէ, ոչ իր չահի և ոչ ալ իր տիրապետութեան շէնքէն չաղախ մը կ'իյնայ, բայց մարդկային արարածը, որ իր մէջն և ոսկորէն չինուած է նոյնիսկ իր արեան ալ ժառանգակից, լեզուով, կրօնքով և հայրենիքով պսակուած, չի կրնար անոր ցաւերը և վէրքերը դարմանել, կարող է շատ անգամ կոկորդիլոսի արցունցներ թափել և ծածկել իր բուն հոգին, բայց չի կրնար իր չահին դէմ գործել, չի կրնար անձնասպանութիւն գործել, առանց իր չահի և գոյութեան վերջակէտ դնելու չի կրնար իր անկեղծ և իրական կսկիծ զգալ և ընկեր արարածին տառապանքները մեղմել։ Կարող է ձին ոչ միայն պաշտպանել, այլ նաև ազատ արձակել, ազատագրել զայն, քանի որ ատիկա այլևս իր չահուն վտանգ չի բերեր, անոր ֆիզիքական ուժէն աւելի հզօր բնութեան ոյժերը իրեն ստրկացած են և կը կատարեն իր ամեն հրամանները։ Իսկ մարդը որչափ ալ տառապի ու չարչարուի, պէտք է մնայ ստրուկ և չղթայուած քանի որ անոր ազատագրումը իր անկումը ըսել է, առանց իր անկման անիկա ազատուած չի կրնար ըլլար։ Զգացումներու այս հակասութիւնը որ քափիթալիստը կը ցուցադրէ մարդուն և կենդանիին հանդէպ, չահի զսպանակն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:43 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

է, ոչ այլինչ։ Եթէ Թովմըս Փարլայլ այդ բանին թափանցած ըլլար, օր մը չի պիտի ըսեր Դարվինի թէ շատ հասկնալի է, որ ձեր բարեշրջման օրէնքով մեր կապիկները մարդուն կը հասնին, կ'ընդունիմ այդ. ի՞նչպէս պէտք է մեկնել այն երևոյթը, որ մարդիկ կապիկներ կը դառնան, այդ չարափոխութիւնը ի՞նչպէս պէտք է բացատրել։

Քափիթալիզմը՝ առանց պատերազմի իր շահերը փնտռելու ատեն, պատերազմի դէմ կը կուի նաև պաշտօնական ձեռքով, դիւանագիտութեամբ։ Քափիթալիզմի պաշտօնական ներկայացուցիչները կը բանակցին իրարու հետ, իրարու քով կուգան, կ'ուզեն իրար հասկնալ, վերցնել իրենց մէջ եղած անհասկացողութիւնները և խոչնդոտները ապագայ արիւնհեղութեանց առաջքը առնելու, եթէ մասամբ զիրար լրտեսելու, իրարու ոյժեր չափելու թաքուն նպատակէ մը չեն կրնար իրենք զիրենք ազատել, ստոյգ է որ ի սրտէ կը փափաքին, թէ ոչ պատերազմէն, գէթ միլիտարիզմի տաժանագին բեռէն ազատել բոլորն ալ, որը կապարի պէս կը ճնշէ բոլորին ալ ուսերը։ Ռազմական ծախքերը բոցերու պէս կը լափեն քափիթալիզմի յաւելեալ արժէքները, որոնց համար ամեն տաճարի մէջ կ'երկրպագէ։ Բայց քանի որ քափիթալիզմի գոյութիւնը և կեանքը դրած է այնպիւի հողի մը մէջ, ուրկէ բաժանումը իր մահը կը նշանակէ, ինչպէս ջուրը ձկան և ցեխը որդին համար, այդ բոլոր բաղձանքները օդը կը ցնդին, անոնք բղխած ըլլան անկեղծ կամ կեղծաւոր սրտերէ, չար կամ բարի դիւանագէտներէ։ Անգլիա, երբ իր ոտքը խաղաղութեան վեհաժողովին մէջ դրած պահուն իսկ առուրը մերկացուցած Պոէրները կը ջարդէ, իսկ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 12:25 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Զարը իր խաղաղութեան մանիֆէստի յաջորդ օրը Մանչուրիան իր արկածախնդրութեանց դաշտը կը դարձնէ և Ճաքոնի հետ իրար կը բզքտեն, ո՛չ թէ անոր համար որ իրենք անկեղծ չեն և երկերեսանի, այլ անխուսափելին զիրենք կ'ենթարկէ այդ դրութեան, երբ սիրտերնին կը բացուի և կը տարածուի խաղաղութեան աղաւնին ողջունելու, չահերու առանցքը, գլուխը բռնադատուած կը բռնէ անոնց մարմինները և դուրս կը նետէ այդ խաղաղութեան տաճարներէն, որովհետև անգլիական կառավարութեան ծպտուտին տակ քափիթալիստ Սըսիլ Ռոտերը պօէրական աղամանդի հանքերէն չեն կրնար ձեռք քաշել խաղաղութեան հազարաւոր աղաւնիներու համար։

Քանի որ քափիթալիզմի գոյութեան հիմնաքարը, մրցում, յարձակում, պատերազմ է, իր շահի յաղթանակին միակ և անդառնալի ճանապարհը, իր ունեցած արտաքին կամ ներքին բոլոր ջանքերը և անկեղծութեան արտայայտութիւնները կը մեռնին, կը չոգիանան ինչպէս ջրի կաթիլները արևին առաջ։ Քափիթալիստը ինքը չար և վայրագ չէ, այլ դրութիւնը, որ բաժնած է իրեն՝ դահիճի դերը, իսկ ստրուկին՝ զոհի։ Երբ դրութիւնը ըրած է ստրուկի և սկրկատէրի, քափիթալիստի և գործաւորի բաժանումը, եթէ քափիթալիստը չի կանգնի իր դերին վրայ, ինքն ալ կեր պիտի երթայ և իյնայ շահագործուողի դասակարգին մէջ։ Միջազգային քափիթալիզմի դրութիւնն ալ նոյնն է ինչ որ ազգային քափիթալիզմին համար է, երբ ազգային քափիթալիստները իրարու կոկորդ կտրելով կարող են դրութեան տէր հանդիսանալ միջազգային հողին, գաղթային քաղաքականութեան մէջ, հոն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:44 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մրցակիցները դարձեալ իրենք են, սա տարբերութեամբ, որ ամեն մէկը իր դէմքին վրայ, իր երկրին, իր ամբողջ ազգին անունով դիմակ մը կը կրէ։

Իրարու սահմանակից քափիթալիզմի ներկայացուցիչ կառավարութիւնները, այժմ իրարու սահմաններ կրծելու կարիք չունին, անոնք երկուստեք քափիթալիստներու անյագ որկորին անունդ տալով սպառած են, քաշուած են այդ տեղին պրոլետարիատին ստինքները, պէտք է դուրսները, գաղթավայրերու չուկաները ապահովել, որոնք առոյգ և կայտառ ստինքներ ունին և կաթով առ լի։

Այսօր կուսախնձորները գաղթավայրերն են, Ֆրանսա թունուզը և Ալճէրին չի փոխեր տասը Ալզաս և Լօրէնի հետ. անոնց յիշատակը պահել կուտայ, երբեմն կը յիշեցնէ, կը վերարծարծէ սոսկ իր շահագործուողներուն ազգայնական ջիղերը ձիգ և զգացումները վառ պահելու համար, որպէսզի անոնք իբր կոյր և անկամ բանակ, կարենան աւելի մոլեռանդ և կատաղի կերպով կռուիլ։ Եւ այսպէս ամենն ալ իրենց ձեռքին մէջ կը պահեն իրենց դրացւոյն դէմ ոխի և ատելութեան թոյնը, «հայրենասիրութիւն» անունով։

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԱՏԵՆ

Քափիթալիզմը, իր նաւատորմիղով, բանակով և պատերազմական բոլոր սպառազինութեամբ, միայն պատուհաս և չարիք մը եղած չէ, այլ բուն իսկ իր խաղաղ տնտեսական զարգացմամբ իր ընկերական կեանքովը, պատերազմ մ'է և ամենէն ահաւորը։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:44 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Այն ճարտարարուեստական բանակները, բանուորական խումբերը, եթէ կազմակերպուած չեն մարդ սպաննելու համար, բայց կազմակերպուած են քափիթալիստին հարստութեան ու յզփանքի չտեսարանները լեցնելու, այո՛, ասոնք ուրիշը չեն սպաններ, այլ իրենք զիրենք կ'ըսպաննեն, կը մաշին և կը տառապին և անարև կը մեռնին քափիթալիստին անկուշտ ախորժակին համար։ Այս տնտեսական դրութեան տակ իյնող և չունչերնին փչողները չատ աւելի են քան պատերազմի դաշտին վրայ մեռնողները, եթէ վերջինները տարիներու շրջանին մէջ մէկ օր մ'է որ կերթան կը մեռնին, ասոնք ամեն օր կը տառապին, կը մեռնին և դարձեալ կը ծնին տառապելու համար։

Աշխարհի ամենամեծ պատերազմները, որոնք երբեմն երբեմն պայթած են դարերու միջոցին, նոյնիսկ ներկայ քափիթալիստական արիւնհեղութիւնները, որոնք իրենց էն ահաւոր գործիքներով գործադրուած են, չեն կրնար բաղդատուիլ քափիթալիզմի ներկայ տնտեսական խաղաղ արիւնհեղութեանց և ջարդերու հետ։ Եթէ մէկ կողմ ձգենք ներկայ դրութեան ընկերական բոլոր չարիքները, հիւանդութիւնները, համաճարակները, սովամահները և անձնասպանութիւնները, սոսկ ճարտարարուեստի երկաթէ մեքենաներու հնձած կեանքերը և խաթարած մարմինները, ամենէն արիւնահեղ պատերազմները կը գերազանցեն։

Մինակ Միացեալ Նահանգներու մէջ ճարտարարուեստի մէկ ճիւղը՝ երկաթուղին տարեկան 70 հազար մարդ կսպաննէ և աւելի քան մէկ միլիոն մարդ կը հաշմանդամէ, ամեն մէկ 6 ժամուն մէկ մարդ կը մեռնի և ամեն բոպէի մէկը կը վիրա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:44 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ուրուի, չատեր մահացու կերպով։

Եթէ այս թիւերը երկարենք ամեն ճիւղի մէջ և ամեն երկրի համար, սխալ չի պիտի ըլլար եթէ ըսէինք թէ մօտաւորապէս ՅԱՐԵԿԱՆ 3 ՄԻԼԻՈՆ մարդ գերեզման կիջնեն քափիթալիզմի շահի և դասակարգային տիրապետութեան համար, որոնց հարիւրին 90ը կարելի էր փրկել եթէ շահի խթանը չըլլար անոնց բնաջնջման ետևը։ Քափիտալիզմը քաղաքակրթութեան պահապան գամփռն էր, յառաջդիմութեանց ոահվիրան և մատակարարը. այսօր իր զարգացման, հասունութեան տարիքը անցուցած, զառամած է և փտութեան փրօսէսին ենթարկուած, կատաղած գամփռն է այսօր, որը պէտք է ապաննել և մէջտեղէն վերցնել, աւելի աւեր և ապտուհաս սփռելէ առաջ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Արդ, դարձեալ հարցը հարցականի մը պէս կը կանգնի մեր առաջ և լուծում կը պահանջէ, թէ պատերազմը պիտի վերջանա՞յ։ Եթէ այո, ե՞րբ, ո՞ր դարու քաղաքակրթութեան ո՞ր աստիճանին վրայ, և որոնք պիտի ըլլան անոր յաւիտենական քնոյ դամբանախօսները։ Անոնք որոնք կը հաւատան թէ, ներկայ քափիտալիստական քաղաքակրթութիւնը էն բարձր և կատարելագործուածն է, որը պիտի ապրի յաւիտեան, անոնք, եթէ փորձեն պատերազմի դէմ պայքարելու, անզօր ջանքեր պիտի թափեն և հարկադրուած պիտի խոստովանին թէ պատերազմը անխուսափելի չարիք է և պիտի ապրի մարդկութեան հետ, ոմանք պիտի կոչեն զայն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:44 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մոլթքէի պէս «սուրբ, նուիրական և աստուածային», իսկ անոնք որ կը հաւատան թէ կայուն բան չկայ, անփոփոխ չկայ, միայն յաւիտենական էվոլիւշընի և յեղափոխութեան հաւատացողներս կընդունինք թէ ինչպէս որ նախկին քաղաքակրթութիւնները անցած գացած են իրենց մեսիան կատարելով նոյնպէս ալ ներկայ քաղաքակրթութիւնը պէտք գլուխի իյնայ իր յաջորդին տեղի տալու համար։ Մենք կը հաւատանք և համոզուած ենք ինչպէս գիշերէն վերջ առաւօտեան զարթնումին, նոյնպէս պատերազմներու մահուան, որոնք այլևս ոչէ գոյութեան իրաւունք չունին և աւելորդ և անհանդուրժելի չարիքներ են քաղաքակրթութեան ուսերուն վրայ։

Ի՞նչպէս և ե՞րբ պիտի հասնի պատերազմներու մահը և անոնց թաղումը։ Բնական և զարգացման օրէնքով, անժամանակ և բռնագրօսիկ ամէն ջանք պիտի վիժին և անգործութեան դատապարտին։

Մենք տեսանք թէ ինչպէս պատերազմները իրենց գոյութիւնը ստացած են տնտեսական պատճառներէ, ապրուստի անբաւականութենէ. տեսանք թէ ինչպէս համայնքներ պատերազմներու միջոցաւ իրենց գերակշռութիւնը կը պահէին։ Տեսանք ինչպէս պատերազմներ դասակարգային դառնալով, անոնք դարձեալ տնտեսական անբաւականութեան պատճառաւ շահագործական դրութեամբ քաղաքակրթութեան անիւը առաջ մղած են միջոց տալով մարդկութեան մէկ դասակարգին մտաւոր և ընկերական զարգացման, հետևաբար մարդկային յառաջդիմութեան։ Տեսանք նաև նոյնիսկ ներկայ քափիթալիստական սիստէմի պատերազմները, մրցակցութիւնները իբրև ազդակ ճարտարարուեստի զարգացման և յառաջացման։ Այսօր այդ պատճառ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:44 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ները գոյութիւն ունի՞ն, արտադրութեան միջոց-
ներու անհամեմատ զարգացումը և ապրուստի մի-
ջոցներու առատութիւնը, այլևս պատերազմներու
գոյութեան հող ձգա՞ծ են։ Ներկայ դրութեան
մրցման, մրցակցութեան՝ յառաջդիմութեան ամեն
վարկ և արժանիք ուող պաշտպանները, այսօր
իրենց աչքին առաջ կատարուած կը տեսնեն արդէն
հետզհետէ անոնց ցնցումը և մահը։ Քափիդալիզմը
հասած է չրջանի մը որ ինքը իր գոյութեան հողը,
մրցումը կը ջնջէ, փոխանակ իրարու դէմ մրցելու,
պայքարելու և զիրար կոխոտելու. քափիդալիստ-
ները իրարու կը կապին և կը ջնջեն իրենց մէջ
մրցակցութիւնները, կեր ընելով մանր մրցակից-
ները թրըսթներ կը կազմեն տեսակ մը բնական,
տնտեսական մոնոփոլիներու վերածելով։ Սոսկա-
յան գերեզմաններէն մէկն է, իր փտութեան փրա-
սէսի մէկ քայլը, որուն համար անմահ Քարլ
Մարքս ըսած է, «Քափիդալիզմը ինքը իր ձեռքով
իր գերեզմանը կը փորէ»։ Նոյնիսկ այսօր եթէ
նայինք չուրջերնիս մի քիչ աւելի խորունկ,
պիտի տեսնենք որ քափիդալիզմի ստեղծած միլի-
թարիզմը ինքզինքը ուտելու, զինքը կրծելու չրջանին
հասած է։ Ամեն երկիր իր ահաւոր սպա-
ռազինութեամբը հետզհետէ իր ոտքի կուանը կը
խախտէ, դէպի իր նահանջի կէտին կը մօտենայ։
Ասիկա պատճառ մը՝ է որ երբ ամեն մէկը իր ա-
մենէն մեծ ճիգը կը դնէ գերազանցելու, նոյն այդ
մէկը, բանակը ցրելու զինաթափ ըլլալու պաղա-
տագին կոչեր կուղղէ իր մրցակցին։ Միջազգային
քափիդալիզմն ալ այսօր հակառակ իրենց անհաշտ
շահերու և մրցակցութեան, հետզհետէ մերձեցման,
համաձայնութեան դաշտերու վրայ խումբերու բաժ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:45 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նըւած, քաղաքական թրքութներ կը դառնան։ «Հոյակապ մեկուսացման» սկզբունքը դաւանող Անգլիան ինչպէս իրերու ճնշումին տակ, դաշնակիցներու և խմբակցութեանց մէջ ինկաւ։

Ներկայ Եւր. պատերազմի ծագման պատճառները՝ միապետական, թագաւորական գերդաստաններու տիրապետութեան, ազգերու, ցեղերու, լեզուի և այլն տիրապետութեան կամ բաղխումին վերագրուելէ յետոյ պատերազմի այս չարունակութիւնը բերաւ բոլորն ալ հասցուց այն եզրակացութեան թէ, պատերազմը գլխաւորապէս տնտեսական ծագում ունի։ Եւրոպական քափիտալիզմի ծաւալումին և գաղթավայրերու մէջ նոր շուկաներ ապահովելու համար է։

Արևելեան հարցը գրեթէ ամենամեծ ազդակն է ներկայ պատերազմի ծագման, թիւրքիոյ ժառանգութեան հարցն է, աւելի մասնաւորելով Պաղտատի երկաթուղիին և Միջագետքի իւղի հանքերուն շուրջն է։ Պալքանեան պատերազմով և հողային նորանոր գրաւումներով Աւստրօ-Գերման աւանդական ծրագրերու դոները կը փակուէին։ Համապուրկէն մինչև Պաղտատ և յետոյ Հնդկաստան, ուղիղ և կտրուկ ճամբայէն Գերման երազին մահը կը դողար Գերման քափիտալիզմին աչքին մէջ։ Այդ պատճառաւ Գերմանիա երբ ինքզինք պատրաստ գտաւ, փչրել ուզեց երկաթէ անուրը որ հետզհետէ իր դաստակը կը սեղմէր և պատերազմին չեփորը հնչեցուց։

Այսու հանդերձ մեր կատարեալ համոզումն է դարձեալ թէ՝ սուրի իրաւարարութեան յանձնելն իսկ Գերմանիոյ համար նաև անխուսափելի չէր։ Հակառակ իր զինուորական և ռազմական հակայ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:45 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

պատրաստութեան, Գերմանիա պիտի նախընտրէր խաղաղ թափանցումը և օր մը իր մրցակիցներու հետ իրաւախոհութեան մը այս կամ այն կերպ յանգելը աւելի նպաստաւոր և ձեռնտու էր, եթէ մի քիչ Գերման խելագար Քայզրը և տաք գլուխ դիւանագէտները պաղարիւնութեամբ ընթանային։ Այս արհաւիրքներուն և արեան առաջքը կառնէր և ատեն մը անցնելով մրցակցութեան սուր ծայրերը կը բթանային, Գերմանիա իր մրցակիցներու հետ համաձայնութեան պիտի գար, ինչպէս Անգլիա եկաւ իր աւանդական հակառակորդին՝ Ռուսիոյ հետ բոլոր կէտերու վրայ։ Եւ այսպէս աշխարհը այս արիւնհեղութեան թատերաբեմը չէր հանդիսանար։

Հարցերը որչափ որ լաւ լուծում ստանան, ասիկա այնչափ անագին և թանգ գին մ'է որ կարելի չէ վճարել։

Իսկ պատերազմին տնտեսական անբաւականութեան ունեցած նախնական իրաւունքը, ներկայ դրութեան տակ խօսիլն իսկ աւելորդ և անիմաստ է։ Բնական ոյժերու և մեքենաներու գործակցութեամբ այսօր տնտեսական զարգացումը և արտադրութիւնը այնչափ առատ և յորդ է, որ մարդկութիւնը ոչ թէ անոր պակասութենէն կը տառապի, այլ չափազանց առատութենէն՝ չնորհիւ հակասական, անարդար և քաոսային բաշխումի մը, այն պէս որ այդ առատութիւնը մերթ ընդ մերթ տնտեսական տագնապներու պայթումով կուգայ աւելի ծանր ճնշել արդէն պրոլետարիատին չափազանց յոգնած ուսերը և քար կանգնեցնել յառաջդիմութեան անիւին առաջ։

Կար ատեն մը որ ապրուստի չգոյութենէն կը

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:53 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

տառապէր մարդկութիւնը և իրար կը բզքտէին. այսօր ապրուստի առատութեան դէզերուն վրայ անսաղ կը մեռնին։

Այդ տնտեսական տագնապները ի հարկին կը դառնան շատ անգամ փրկութեան ելք, ուեղծելով ատեն մը դադար և սպառում, մինչև որ դարձեալ տնտեսական զարգացումը իր ճամբան շարունակէ։ Տասնեհինգ րոպէի մէջ, երբ մեքենաներու շնորհիւ կարելի է զոյգ մը ամենէն նուրբ և կատարեալ կօշիկը երեսան բերել, ի՞նչ պատճառ կայ մարդկութեան մեծամասնութեան առանց կօշիկի, բոկոտն մնալու։ Մեքենաները մէկ ժամու մէջ հազարաւոր արտավար դաշտեր կը հնձեն, կը կամնեն և կը գատեն, հարիւրաւոր մարդոց տարիներու աշխատանքին տեղ. ինչո՞ւ մարդիկ անսաղ կը մեռնին։ Ո՛չ թէ առատութիւնը անբաւական է, այլ առատութիւնը փճացման կենթարկուի, կայրեն, կը թափեն, կոչնչացնեն բնութեան բարիքները առանց անոնք բուն արտադրողներուն վերադարձնելու։ Ծանցաւորը սիստէմն է և ոչ թէ արտադրութեան պակասը։

Երբ ընկերվարութիւնը պատերազմի դէմ կը պայքարի, կը դնէ առաջ գիտութեան փաստը և կը հաստատէ անոր զոյութեան ժիտու

։ Կը պայքարի անոր դէմ, ոչ թէ պղատոնական սիրով մը, սրտի և զգացումի խոսքերով, այլ նաև շահերու ըմբռնումով, մէկ դէմքով չարտասուէր և միւսով սպանութեանց ծրագրեր յօրինէր։ Կը հաստատէ թէ դասակարգերու շահը պատերազմներու մէջ է, իսկ մարդկութեան շահը անոնց ջնջման. ուրեմն ջրնջելով դասակարգերը, պատերազմը ջնջած կլլլան։ Ուրեմն պատերազմներու վախճանը այն օրէն է երբ պատերազմները անուցանող, մեծցնող հոգը չնջի։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:53 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ներկայ պատերազմներու արմատը՝ նոյն ինքն քապիտալիզմն է, իրեն անկումով միայն կարելի է պատերազմներու անկումը հաստատել։ Բոնագրօսիկ և անբնական չէ՞, որ քապիտալիզմը, մայրը պատերազմներու, ինչպէս ներկայ բոլոր ընկերական չարիքներու, հրապարակ գայ անոնց դէմ պայքարելու։ Ասիկա է և հոս թաղուած է գաղտնիքի բանալին, առանց անոր ձեռք դպցնելու, անբնական և ծիծաղելի պիտի ըլլայ պատերազմներու դէմ կռիւ յայտարարելու, անէծք և արցունք թափելու։

Բայց ընկերվարութիւնը, իրողութիւնը պարզելով, չարիքը մատնանշելով չի բաւականանար միայն, չի բաւականանար որ քապիտալիզմը իր փտութեամբ իր դագաղը չինէ, որովհետև, դիակը կը գարշահոտի և կապականէ մթնոլորտը, քապիտալիզմի կեանքին ձգձգումը և երկարաձգումը, իր հետ կը բերէ նաև վատասերում նորածիլ, կենսունակ ոյժերու, այլասերում քաղաքակրթութեան ազգականներուն. մեռելաթաղներ պէտք է երևան գան և անոր անթաղ մարմինը գերեզմանի մէջ ամփոփեն և անոր «անշարժ եղիցիի» կնիքը դրոշմեն առանց գալստեան և ծննդեան։

Այդ չի բաւեր միայն, ընկերվարականները պիտի փութացնեն անոր մահն ալ, իր աւելորդութենէն ազատելու համար։ Այդ իսկ պատճառու հրապարակ եկած են, ներկայ խարխուլ և քայքայուն շէնքի հիմքերէն, կտորներ փրցնելով ապագայ ընկերութեան հիմնարկէքին ատաղձները պատրաստելու համար։

Դասակարգային տիրապետութեան առաջ կը դնէ ընկերվարութիւնը դասակարգային գիտակցութիւնը, պայքարը։ Այդ պայքարի գիտակցու-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:54 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թեան հիման վրայ կը կանգնէ իր ճակատամարտը և կը մղէ շահագործուողները հոն, իրենք զիրենք ազատելու միակ ճանապարհը զայն ցուցնելով։ Այդ ուղղութեամբ և սկզբունքով միայն կարելի կըլլայ մարդոց սիրտը, ինչպէս նաև միտքը մշակել պատերազմի սարսափներու դէմ, զգացումի վառօ-գէն առաջ, բանականութեան, գիտակցութեան գնդակները կը զետեղէ, որովհետև անոնք կրնան թափանցել քափիտալիզմի զրապատ կուրծքերը։ Կը կազմակերպուի տնտեսապէս թէ քաղաքականապէս, միշտ իր դասակարգային գիտակցութեան շահէն անբաժան կը կրթուի, կը զարգանայ և կը դաստիարակուի նոյն դպրոցին մէջ և կը նեռուի առաջ իր պատմական միսիան կատարելու համար։ Այդ դասակարգային մարզարանին մէջ միայն կրնայ գործաւորը, զինուորը, ոստիկանը թէ պաշտօնեան իր վիճակին գիտակցութիւնը ունենալ և դառնալ իր շահագործողներուն ըսելու.— «Այլ կը բաւէ, մեզ մեր աշխատանքէն զրկեցիք և ձեր շահերուն գործիք ըրիք, ձգեցէք մեզ մեր գործին, դուք ալ ձեր գործին, ոչ թէ դարձեալ մարդասպան ոճրագործութեան ծրագրեր յղանալու և մեզ գործադրել տալու, այլ դուք ալ ձեր չինարար աշխատանքին նուիրուելու, ձգեցէք այդ մականը ձեր ձեռքէն և իջէք այդ գահէն, որոնք ոսկորներով և գիակներով կերտուած են։ Մեր փափաքը ձեր գահը խլել չէ, գահը, գահակալութիւնը բոլորովին ջնջել մերը բարձրացնել չէ, այլ բոլոր դասակարգային աստիճանները ջնջել։ Բոլորս ալ եղբայր— ճամբորդներ դառնանք մարդկային յառաջդիմութեան անվերջ ճանապարհին վրայ»։ Ահա այդ օրն է, որ քաքիտալիզմը կիջնէ իր գահէն իր պատերազմներով և

բոլոր չարիքներով և կը խոնարհի անխուսափելիին առաջ, կը մտնէ և կը խտացնէ մարդկութեան օգտակար և չինարար աշխատանքի բանակը։ Այդ օրն է, որ պատերազմները իրենց վերջին շունչը կաւանդեն և մարդկութիւնը կը հաղնի անբռնաբարելի ազատութեան և յաւիտենական խաղաղութեան ծիրանին։ Պատերազմները իրենց արիւնի և սարսափի գործիքներով պատմութեան սեփականութիւն կը դառնան և Վ. Հիւկօի իտէալը իրականացած կըլլայ, որ կըսէր. օր պիտի գայ, որ այսօրուայ պատերազմի գործիքները թանգարաններու մէջ պիտի դրուին և սերունդներ անոնց վրայ սարսուռով և սարսափով պիտի նային և մտածելով պիտի ասեն, ինչպէս մենք նախկին դարերու չարչարանքի գործիքներուն նայելով, թէ եղած են մարդիկ, քաղաքակրթութեան այնպիսի դարերուր այսպիսի գործիքներով զիրար փողոտած են եղեր։ Այդ օրը ընկերվարութեան յաղթանակի օրն է, որ իր ոսկեղէն և վարդագոյն թևերը պիտի սփռէ մարդկութեան վրայ։ Այդ օրերն են, որ պիտի իյնան պատերազմներու զօրապետներու արձանները, Նաբոլէոններու և Կեսարներու յաղթական կամարները փչուր փչուր ըլլան անէծքի ու նախատինքի ոտքին տակ, յաղթականներ, որոնց մեծութիւնը և դիւցազնութիւնը, դարաւոր թշուառութիւն, զըրկանք, աւեր, արիւն և արցունք ցանելուն մէջ եղած է, և անոնց պատուանդանին վրայ, մարդկութեան օգտին և բարիքին աշխատող ճշմարիտ բարեկամներու, Փասթէոներու, Մարքսերու և Դարվիններու արձանները պիտի կանգնի։ Պատերազմի դաշտէն դարձող զինուորին ծակծուկ մարմինը և սպիները փառքի և պատիւի չքանշաններ ըլլալէ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:54 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

պիտի դադրին և դառնան դատապարտութեան և անարգանքի խարաններ, զինուորը հերոս մը ըլլալէ աւելի դահիճ պիտի կոչուի, իսկ ճշմարիտ և իրական հերոսը պիտի դառնայ բանուորը՝ աշխատանքի պատգամաբերը, որը սպաննելէ աւելի ստեղծած է, աւերելէ, սպառելէ աւելի արտադրած է։ Փառքի նշանները, յարգանքի գափնիները, անոր կորացած մէջքը, խորշոմած ճակատը և կոշտացած ձեռքերը պիտի ըլլան, սուրբ և նուիրական սպիներ, արժանի մարդկային փառքին և գնահատման։ Այդ օրը որ հեռու չէ, կը բանայ արդէն իր արշալոյսին խանձարուրները Ընկերվարութեան գրկին մէջ։

Generated on 2016-07-15 09:55 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՓԱՌՔԸ

(Վ. ՀԻԻԿՕ)

«... Ոյժը այսօր բռնութիւն կը կոչի և դատի քաշուած է։ Պատերազմը ամբաստանութեան աթոռին վրայ նստած է։

Քաղաքակրթութիւնը մարդկային ցեղին բողոքին վրայ քննութեան հրաման արձակած է, զօրապետներու և յաղթականներու ոճրագործութեան ահեղ ամբաստանագիրը գծուած է և պատմութիւնը վկայութեան կոչուած։

Փառահեղութիւնը կը ցնդի և իրականութիւնը կը պարզի։ Շատ պարագաներու տակ, հերոսը տեսակ մը մարդասպան երևան կուգայ։

Ժողովուրդը սկսած է հասկնալ թէ ոճիրին մեծութիւնը չի կրնար արդարացում նկատուիլ։ Եթէ սպաննելը ոճիր է, երկիր արշաւելը փառք չի կրնար ըլլար, ազգային սրբազան երգը այլևս իր հմայքը կորսնցուցած է, թէ մարդասպանութիւնը մարդասպանութիւն է, արիւնհեղութիւնը՝ արիւնհեղութիւն, թէ անարժէք է մէկը ինքզինք կեսար կամ Նաբոլէօն կոչելը, թէ յաւիտենական Աստուծոյ առաջ մարդասպանի մը կերպարանքը չի կրնար փոխուիլ, որովհետև գլխուն վրայ մարդասպանի գլխարկին տեղ կայսեր մը թագը ըլլայ։ Ո՛հ, բացարձակ յայտարարենք ճշմարտութիւնը։ Անարգենք պատերազմը։ Ո՛չ, փառաւոր պատերազմ չի կրնար ըլլալ։ Ո՛չ, դիակ սփռելը մարդկային չէ, օգտակար չէ։ Ո՛չ, չի կրնար ըլլալ որ կեանքը երկունքի ցաւեր քաշէ մահուան համար միայն։ Ո՛չ, ո՞վ մայ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-07-15 09:55 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բեր, ո՛չ, չի կրնար ըլլար, որ պատերազմը՝ այդ աւազակը չարուն ակէ խլել ձեզմէ ձեր զաւակները։ Ո՛չ, չի կրնար ըլլար, որ ցաւերով զաւակ ծնանին, մարդիկ հերկեն և սերմանեն, երկրագործը պտղաբերէ դաշտերը, գործաւորը հարստացնէ քաղաքը, թէ ճարտարարուեստը հրաշքներ գործէ, հանճարները սքանչելիքներ ստեղծեն, թէ ամբողջ երկնակամարի տակ մարդկային ընդարձակ գործունէութիւնը իր ջանքերը և ստեղծագործութիւնները բազմապատկէ, բոլորը մէկ նպատակի համար, պատերազմ կոչուած միջազգային զարհուրելի ցուցահանդէսի մը համար»։

Generated on 2016-07-15 09:55 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Generated on 2016-07-15 10:26 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

Generated on 2016-07-15 10:26 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

Generated on 2016-07-15 12:18 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

SAINT JAMES ARMENIAN LIBRARY
3200 W. Adams Blvd.
Los Angeles 18, Calif.

Digitized by Google
Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

Generated on 2016-07-15 12:18 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.ax0001605955
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google